

1960

ՊԱՐԻԵԼՅԱՆ ՀԵՆՐԻ

Պ Ր Ո Լ Ե Տ Ա Ր Ի Ա Տ Ի  
 Ի Ն Ք Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն  
 3 Ե Կ  
 Մ Ա Ր Ք Ս Ի Զ Մ Ի  
 Ի Բ Բ Ե Կ Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
 Լ Ի Ն Ե Լ Ի Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ր Ո Ց Ե Ս Ը

Պ Ե Տ Չ Ր Ա Տ

1M4  
 9-13

01 JUL 2005

1M4  
9-13  
ս

ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ՇԵՆՐԻ

ՀՀԵԵԵ  
6001

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ

ՅԵՎ

ՔԻՕԿ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԻԲՐԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍԸ

(Ննգելսի մահվան 40—ամյակի առթիվ)

904



ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1936

2.03.2013

1960

Տեխ. խմբ. Տ. Խաչվանյան  
Սրբազրիչ ՈՃՆԻԿ Գասարչյան



Հանձնված և արտադրուի. 26 հունի. 1936թ.  
Ստորագրված և տպագրուի. 5 ապրիլի 1936 թ.  
Քլավկա 2003, Գառվեր 184, Հրատ. 3610, Տիրաժ 3000  
Պետրապի տպարան, Յերևան, ԻԻ Գնունի, 4

Մարքսի ու Ենգելսի մեծագուշն չերախախտը պրոլե-  
տարիատի առջև այն է, վոր նրանք նրան սովորեցրին «ինքնա-  
ճանաչում ու ինքնագիտակցություն և անուրջների փոխարեն  
դրեցին գիտութունը»: Այսպես է գրել Լենինը քառասուն  
տարի առաջ բանվոր դասակարգի սիրելի ուսուցիչ՝ Ֆրիդրիխ  
Ենգելսի մահվան առթիվ: Վոչ թե պետական ինչ-վոր նոր  
ձևերի հնարում, վոչ թե փիլիսոփայական «գրանդիոզ» սիս-  
տեմների ստեղծում, այլ բանվոր դասակարգի մեջ իր սեփա-  
կան արժանապատվության և իր պատմական առաքելության գի-  
տակցության արմատացում,—ահա թե ինչն է Մարքսի ու Են-  
գելսի անգնահատելի ծառայութունը: Նրանք առաջինն ապացուցե-  
ցին, վոր պրոլետարիատն է մեր եպոխտի այն միակ դասակարգը,  
վորը կարող է մարդկութունը դուրս բերել և դուրս է բերում  
կապիտալիզմի ստեղծած փակուղուց, կարող է խորտակել աշխա-  
տավոր ժողովրդին ստրկացնող շղթաները և հեղափոխական  
թուխչք կատարել «անհրաժեշտության թագավորությունից  
ազատության թագավորությունը»: «Մոցիալիստները և առհա-  
սարակ բանվոր դասակարգի բարեկամները» մինչև Մարքսն ու  
Ենգելսը «պրոլետարիատի մեջ տեսնում էլին միայն խոց» և  
սարսափով էլին նայում «այդ խոցի»<sup>1)</sup> աճմանը: Ենգելսը,

<sup>1)</sup> Լենին, I հ. սուս, էջ 434:

Մարքսի հետ միասին, առաջինն էր, վոր բանվորներին աճման մեջ տեսավ «ճնշող մեծամասնութեան ինքնուրույն շարժման» աճումը «հողու աճող մեծամասնութեան»<sup>1)</sup> հաղթական կոմունիստական հեղափոխութեան աճումն ու նախապատրաստումը:

Կոմունիզմը, «ազատութեան թագավորութեանը» յերկնքից չի ընկնելու, նա հետևանք է լինելու արդի բուրժուական հասարակական հարաբերութեանների դիալեկտիկական բացասմանը, նրան ստեղծում և ստեղծելու՝ յե բանվոր դասակարգը՝ կապիտալիզմի այս զավակը և միևնույն ժամանակ նրա գերեզմանափորը: «Պ-ն Գալյանցները յերևակայում են, վոր կոմունիզմը մի վորոշ վարդապետայնութիւն է, վորը յեղնում է թեորիական վորոշակի սկզբունքից, իրրե իր հիսկից, և այստեղից հետագա բանավարութեաններ և անում: Պ-ն Գալյանցները շատ են սխալվում: Կոմունիզմը վարդապետութեան չէ, այլ շարժում: Նա չեղանկատ ունի վոչ թե սկզբունքներ, այլ վաստ: Կոմունիստներն իրրե իրենց նախադրյալ ունեն վոչ թե այս կամ այն փիլիսոփայութեանը, այլ պատմական վողջ պրոցեսը և մասնավորապես նրա փաստական արդյունքներն՝ արդի քաղաքակրթութեան յերկրներում: Կոմունիզմը հետևանք է խոշոր արդյունաբերութեան և նրա անխուսափելի ուղեկցիների՝ համաշխարհային շուկայի և նրանով պայմանավորված անդուստրիալ ժրջութեան առաջացման, վորոնք ավելի ու ավելի չեն լայնանում, ընդունում են առևտրական ճգնաժամների ավելի ու ավելի կատաստրոֆիկ ընույթ, վորոնք այժմ արդեն միանգամայն համաշխարհային են դարձել, պրոլետարիատի առաջացման և կապիտալիստների համակենտրոնացման, վորոնց հետևանքն է դասակարգային պայքարը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև: Կոմունիզմը, վորչափով վոր նա թեորիա չէ, հանդիսանում է պրոլետարիատի դիրքի թեորիական արտահայտութեանն աչս պայքարում և պրոլետարիատի ազատագրման պայմանների թեորիական միագումարումը»:<sup>2)</sup> Իրրե այսպիսին, գիտական կոմունիզմի թեորիան կարող էր առաջանալ միայն բուրժուական հարաբերութեանների ծավալման ժամանակ, ֆեոդալիզմին կապիտա-

1) Մարքս և Ենգելս, III հ. էջ 295:

2) Մարքս և Ենգելս, V հ. էջ 194:

լիզմի հաղթելու պարագայում: Հետևաբար, միանգամայն սխալ կլինի յենթադրել, վոր կապիտալիզմը սեղրես է միայն և հասարակութեան թշվառութեան: Վոչ, կապիտալիզմը ֆեոդալիզմի համեմատութեամբ, անտարակույս, պրոգրեսիվ յերևույթ էր և նա հարստացրեց մարդկութեան կուլտուրական ստեղծագործութեան փորձը: Ֆեոդալիզմի ժամանակ մարդն, իրրե անձնավորութեան, այնքան ճնշված էր, վոր նրան ամենեւին բանի տեղ չէլին դնում: Ֆեոդալա-ճորտատիրական հարաբերութեանները վոչընչացրել էլին անձնավորութեան ամեն մի ինքնուրույն ճգնում: Ճորտը մարդ չէ. նա վոչ միայն իրավունք չունի ինքնուրույն աղբիւր և մտածելու, այլ և քննադատելի դրան, ասում էլին այն ժամանակվա տիրապետող դասակարգի ներկայացուցիչները: Կապիտալիզմը փորձեց դործնապես ապացուցել, վոր այդպիսի չէ: Թորտակելով ինչպես անտեսական, այնպես էլ քաղաքական կյանքի ֆեոդալական միջնադարյան սահմանափակութեան շրջանակները, կապիտալիզմն առաջին պլանի վրա մղեց անհատի դերն իրրե իմացական ու մտածող սուբյեկտի: Իհենե Դեկարտի՝ Gogito ergo sum նշանավոր ձևակերպումը հեղափոխական կոչ էր՝ ուղղված մտածութեան ֆեոդալական ձևի դեմ, պահանջելով, վոր հեղինակութեան կուլյր հավատն ու անվերապահ ընդունումը յենթարկվին մտածութեանը, վորի ոգնութեամբ մարդը պարտավոր է ստուգել իր յուրաքանչյուր վարմունքը: Յերկրի վրա մարդն ամեն ինչ է, նա յե պատմութեանը կերտում, և վոչ թե աստված կամ հրեշտակը: «Ազգերի աշխարհն ստեղծել են մարդիկ և սա յե առաջին հիմնական սկիզբը, վոր պետք է ընդունել»: Այս աշխարհի ձևափոխութեան պատճառը պետք է վորոնել վոչ թե գերբնական ուժերի, այլ «մարդկային մտքի ձևափոխութեան մեջ» հայտարարեց իտալացի նշանավոր գիտնական Վիկտոր: Այսպիսով մարդու ազատագրութեան պրոբլեմը դարձավ ինքն իրեն ճանաչելու պրոբլեմ, իր արժանապատվութեանների ու իրավունքի գիտակցելու պրոբլեմ, իրրե մտածող անձնավորութեան:

Ֆրանսիական բուրժուական հեղափոխութեան հռչակած մարդու ազատութեան խարտիան այս խնդրի «գործնական» իրականացումն էր հետապնդում: Ազատութեան, յեղաջրութեան և հավասարութեան, — խարտիայի պարունակած այս յերեք հիմնական լոզունգները վերջնականապես ուրվագծեցին նոր դա-

բաշըջանի հիմնական կոնստուկտները: Նոր հասարակութեան ար-  
վեստագետներն սկսեցին հիանալ իրենց հերոսների ինքնու-  
րույն, ազատ գործողութուններով, իսկ իրավաբաններն ել  
շտապեցին կառուցել նոր սիստեմներ, հորինելու նոր իրավա-  
կան նորմաներ անհատի շահերը «պաշտպանելու» համար:  
Սակայն այս բոլորը վորոշակի շրջանակներում, բուրժուական  
հասարակութեան շրջանակներում և կապիտալիստական հարա-  
բերութունների մշտնջենականութունն ընդունելու հիման  
վրա: Ուստի Ֆուրալիզմը դարձավ բուրժուական մտածողութեան  
հիմնական հատկութունը և նրա ներկայացուցիչները մշտա-  
պես մոլորվեցին և շարունակում են մոլորվելով թափառել սե-  
փական դասակարգի ստեղծած նեղ շրջանակների մեջ:

Բացի սրանից, նոր հասարակութեան մեջ նման այն բա-  
նին, ինչպես կրոնական աշխարհում «մարդկային ուղեղի ար-  
գասիքները պատկերացվում են իբրև ինքնուրույն եակներ՝  
ոժտված սեփական կյանքով, վորոնք վորոշակի հարաբերու-  
թյունների մեջ են մարդկանց հետ, միմյանց հետ», սրա նման  
բոլոր այն հարաբերութուններն ել, վորոնք հանդիսացան  
մարդու արտադրական գործունեութեան արդյունքը հեռացան  
նրանից և ինքնուրույն բնույթ ընդունելով, սկսեցին գերիշխել  
նրա վրա: Կապիտալիզմի ժամանակ մեռյալ աշխատանքը սկը-  
սեց հանդես գալ իբրև տեր կենդանի աշխատանքի հանդեպ.  
Կենդանի մարդը գերի մնաց այն նույն իրերի ձեռքին, վորոնց  
արտադրել է նա ինքը: Սրա հետևանքով ել բուրժուական  
մտածողութունը բնորոշ դարձավ առաջին հերթին իբրև իրա-  
վական մտածողութուն, մտածողութեան համար բոլոր սոցիալա-  
կան-դասակարգային պրոբլեմներն ընդունեցին զուտ իրավական  
նորմայի ձևեր:

Կապիտալիզմի ժամանակ կեղեքված դասակարգի պայ-  
քարն իր աղատագրութեան համար չպետք է հանդի կեղեքված-  
ների դիկտատուրային՝ կեղեքիչների նկատմամբ, վորովհետև  
դա կլինի ազատութեան սկզբունքի խախտում,—այսպես սկսե-  
ցին քարոզել բուրժուական ուսման հետևորդները: Ազատութունն  
ինքնաձանաչման այնպիսի պրոցես է, յերբ կեղեքված մասսա-  
ները գիտակցելով իրենց դրութունը, իրենց իրավունքները,  
ձգտում են դրանք ձեռք բերել վոչ թե կեղեքիչների իրավունք-

ները բացասելու միջոցով, այլ ընդունելով նաև դրանք, հար-  
գելով նաև ուրիշների իրավունքները—ասում եր Հեգելը: Յերբ  
ստրուկը գոյութեան միջոցներ է ստեղծում տիրող համար, վերջինս  
հնարավորութուն է տալիս ստրուկին պահպանելու իր կյանքը,  
նրանց միջև, ըստ Հեգելի, այնպիսի կապ է առաջանում, վորը  
հիմնվում է յերկու համար ել գոյութուն ունեցող մի ընդհանուր  
նպատակի վրա: Նրանք յերկուսով ել շահագրգռված են միմ-  
յանց դրութեամբ, հետևաբար, նրանք յերկուսն ել պետք է գան  
փոխադարձ ճանաչման, նրանք յերկուսն ել պետք է գիտակ-  
ցեն, վոր իրենցից յուրաքանչյուրը լիիրավ սուբյեկտ է—յեղրա-  
կացում եր Հեգելը<sup>1)</sup> Յեվ դա վոչ այլ ինչ է բայց յեթե ան-  
հատի ձեռնարկն ազատութունը, վերջինիս կարծեցյալ ընդունումը,  
վորովհետև հարցի նման լուծման դեպքում տերը մնում է,  
ստրուկական հարաբերութունները չեն վոչնչանում, նրանք շա-  
րունակում են գոյութուն ունենալ փոփոխելով միայն իրենց  
դրսկորման ձևերը: Ուստի իսկական ինքնագիտակցութունն  
անկարելի յե առանց բուրժուական մտածողութունը հաղթահա-  
րելու:

Ենգելը տակավին անգլիական բանվորներին ուղղած իր  
կոչի մեջ ասում է, վոր գերիշխող դասակարգերը մշտապես  
ճչում են իրենց շահերի և բանվորների շահերի նույնութեան  
մասին, նրանք յերբեք առիթը բաց չեն թողնում ապացու-  
ցելու, վոր իրենք խորապես շահագրգռված են և համակրանք  
են տածում դեպի պրոլետարիատի վիճակը, մինչդեռ իրականում  
նրանց հետաքրքրում է միայն այն շահը, վոր ստացվում է  
«մարդկային մտի թաքուն առևտրից»: <sup>2)</sup> Այսպիսով Ենգելսի  
համար արդեն սկզբից և յեթ պարզ եր, վոր բանվոր դասակարգի  
ինքնագիտակցութեան, նրա լիակատար ինքնաձանաչման հա-  
մար պայքարելը առաջին հերթին պայքար է պրոլետարների  
մեջ խիստ տարածված բուրժուական նախապաշարունակների դեմ:  
Իհարկե, պրոլետարիատը բնագրաբար զգում է իր հարստահարված  
դրութունը, նա կապիտալիզմի ճնշումը ինչպես շոշափում է  
Ֆիզիկապես, այնպես ել զգում է և հոգեպես, բայց հարկավոր

1) Հեգել, «Վոգու ֆենոմենոլոգիան», էջ 86 և հետո:

2) Մարքս և Ենգելս III հ., էջ 296:

և, վոր նա բարձրանա, հասնի այդ եմպիրիական գգացութեան գիտակցութեան, այսինքն՝ ինքնագիտակցութեան աստիճանին և այն, ինչ նա ահնատու տեսնում, զգում է, քափանցի նրա գիտակցութեան մեջ, նա սկսի ավելի գիտակցաբար վերաբերվել այն բոլորին, ինչ տեղի յե ունենում իր շուրջը: Դեռևս բավական չէ իմանալ, վոր կապիտալիստը շահագործում է, վոր նա բանվորների թշնամին է, հարկավոր է, վոր այս իմացութեանը հասնի մինչև դասակարգային ինքնագիտակցութեան, մինչև այնտեղ, յերբ բանվորն իրեն ու իր շահերը հակադրի իր ձեռնարկատիրոջ շահերին վոչ թե իբրև առանձին բանվոր, այլ իբրև իր դասակարգի անդամ:

Բանվորների առանձին, անկազմակերպ յեւույթներն սկզբունքում հանցագործութեան բնույթ ունեցին: «Հանցագործները կարող են բարբարոսական ճանապարհով բողոքել գոյութեան ունեցող հասարակարգի դեմ՝ միայն իբրև առանձին անհատներ. հասարակութեան ամբողջ գործութեանը թափվում է ամեն մեկի վրա առանձին և ճնշում է նրան իր ուժերի ծայրահեղ դերագանցութեամբ»: <sup>1)</sup> Հետևաբար եմպիրիզմը կործանարար է պրոլետարիատի համար վոչ միայն թեորիայում, այլև պրակտիկայում: Հարկավոր է եմպիրիզմի գգացութեանից բարձրանալ մինչև քննադատի իմացութեանը: Եմպիրիզմը մանրատում է պրոլետարիատի ուժերը, նա նրան քաշում է դեպի մանր-բուրժուական ճանիճը և փաստորեն դասակարգային պայքարի գործիք դարձնում բուրժուազիայի ձեռքին: Ենդեղան ասում է, վոր պրոլետարիատը չի կարող հաղթել «չհարձակվելով բուրժուազիայի, իբրև այդպիսին շահերի վրա, շահեր, վորոնք կայանում են բանվորների շահագործման մեջ», <sup>2)</sup> այլ կերպ առած պրոլետարիատի հաղթանակի գրավականն ենդեղան տեսնում է դասակարգը դասակարգին հակադրելու մեջ, կնշանակի՝ եմպիրիզմի հաղթանարման և քննադատը գիտակցելու մեջ: Ընդհանուրը, ավյալ դեպքում դասակարգը, պատահաբար հավաքված մարդկանց մի խումբ չէ, այլ վորոշ ամբողջութեան, հարաբերութեան միասնութեան դեպի արտադրութեան գործիքները,

1) Մարքս և Ենգելս, III հ, էջ 496—497:

2) Մարքս և Ենգելս, հ. 495: Ընդգծումն իմն է:

գիրի միասնութեան արտադրութեան պրոցեսում, հասարակութեան յեկամուտների բաշխման մեջ և այլն: Առանձին անհատները շահերը վոչ միայն անմիջականորեն միահյուսվում են ընդհանուրի շահերի մեջ, այլև նրանք առհասարակ անհեթեթութեան են առանց վերջինների, իբրև բանվորի շահերի: Իր դասակարգից դուրս բանվորը մի յուրատեսակ Ռոբինզոն է, ուստի «առնաձայն բողոքի յեղանակը հին հասարակութեան դեմ՝ անողուտ է»: <sup>1)</sup>

Շտիբները ժամանակին ջանում էր թեորիայես ապացուցել, վոր եմպիրիզմը միակ ճշմարիտ ուսմունքն է, վորից յեղնելով կարելի չէ և պետք է արդի հասարակութեանը վերակազմել: Ընդհանրութեան սկզբունքը, կոմունիզմի սկզբունքը ասում է Շտիբները, նվաստացնում է անհատին, խլում է անձի ազատութեանը, նրան դարձնում է հասարակութեան մի հասարակ կցորդ, ուստի պետք է առաջնորդվել եմպիրիզմով, վորը դյուրացնում է բուրժուազիայի կողմնակիցների գործը՝ համոզելու մանր-բուրժուազիայի հետամնաց տարրերին, այն բանում, վոր իբր կյանքի իմաստը անհատների եզոխտական շահերի բավարարումն է: Գիտակցից բանվորը չի կարող չապստամբել եզոխդմի այս բուրժուական թեորիայի դեմ, վորովհետև «Եզոխդմը արդի հասարակութեան և արդի մարդու իրեն գիտակցած էյութեանն և միայն, վերջին բանը, վոր արդի հասարակութեանը կարող է ասել մեր դեմ, ամեն մի թեորիայի կուլմինացիոն կետը գոյութեան ունեցող տխմարութեան սահմաններում», <sup>2)</sup> — գրում էր Ենգելսը Մարքսին: Յեվ հիրավի ինչպես կարելի չէ պնդել, վոր ընդհանրութեանը մասնավորի բացասումն է, վոր կոմունիզմը բացասում կամ նվաստացնում է անհատին: Այս կարգի հարցադրումը քեռեապես անհեթեթ է, վորովհետև ընդհանրութեանն ինքը յեղակի անհատների ընդհանրութեան է, նա կազմված է նրանցից և հանդիսանում է առանձին մարդկանց դիալեկտիկական միասնութեան, յերբ խոսքը վերաբերում է դասակարգերին: Ճիշտ է, Հեգելը յուր ժամանակին փորձում էր ապացուցել, վոր իբրև թե գոյութեան ունի

1) Մարքս և Ենգելս, XXI հ., էջ 3:

2) Մարքս և Ենգելս, XXI հ., էջ 7:

մի ինչ-վոր համընդհանուր, իբր այդպիսի մի բան, իսկ յեզակի-  
ները մեր մտքի կոնստրուկցիաներն են լուր: Բայց հեղեղակա-  
նությունը նույնական չի ժամանակակից գիտության հետ:  
Բանվոր դասակարգը, վոր կանգնած է ժամանակակից գիտու-  
թյան բարձրության վրա, «համընդհանուրը հանում է յեզա-  
կիից, և վոչ թե իրենից կամ ողից, ինչպես Հեգելը»: 1) Հետե-  
վաբար, Շտիրները միանգամայն անիրավացի յեր շարունա-  
կելով համընդհանուրի ամեն մի ըմբռնում նույնացնել Հեգելի  
ըմբռնման հետ: Գործնապես շտիրներականությունը բուրժուական  
զրպարտողականության շարունակությունն էր կոմունիստների  
հասցեյին, թե իբր նրանք ուզում են վոչնչացնել «մասնավոր  
մարդուն» իշահ «համընդհանուրի»: Սա մի միջոց էր վախեցնելու  
մանր-բուրժուական տարրերին և գեթ այսպիսով առժամանա-  
կապես մեկուսացնելու նրանց աճող պրոլետարական շարժման  
ազդեցությունից:

Իրականում «կոմունիստները... տարբերվում են հենց նրա-  
նով, վոր միայն նրանք են գտել ամբողջ պատմության մեջ անհատ-  
ների կողմից «ընդհանուր շահ» ստեղծելու փաստը, անհատներ, վո-  
րոնք բնորոշված են իբր «մասնավոր մարդիկ»: Նրանք գիտեն, վոր  
այս հակադրությունը սոսկ քվացող հակադրություն է, վորովհե-  
տև նրա կողմերից մեկը, այսպես կոչված «համընդհանուրը», մշտա-  
պես առաջանում է մյուսից, մասնավոր շահից և բնավ հակադիր չէ  
նրան իբրև ինքնուրույն ուժ, վորն ունենա իր ինքնուրույն  
պատմությունը, այնպես վոր այս հակադրությունը գործնա-  
պես ամբողջ ժամանակ վոչնչանում է և կրկին ծնվում: Այս-  
պիսով, բանն այստեղ հակադրության յերկու կողմերի «հեղեղ-  
յան միասնություն»-ը չէ, այլ անհատների կյանքի նախկին  
նյութապես պայմանավորված ձևի նյութապես պայմանավոր-  
ված վոչնչացումը, վորի հետ միասին վոչնչանում է նաև այս  
հակադրությունն իր միասնականության հետ միասին»: 2) Այն-  
պես վոր կոմունիստական հասարակության մեջ անհատը վոչ  
միայն չի վոչնչանում, այլև իբրև իսկական ազատ անհատ  
նա ծնվում է միայն կոմունիստի ժամանակ: Ուրիշ բան է

1) Մարքս և Ենգելս, XXI հ., էջ 7:

2) Մարքս և Ենգելս, IV հ., էջ 227:

անհատի դրությունը բուրժուական հասարակության մեջ. այս-  
տեղ իրոք անանցանելի անդունդ գոյություն ունի անհատնե-  
րի մեծամասնության շահերի և պետական կազմակերպություն-  
ների միջև: Թեև Հեգելը ժամանակին ջանում էր ապացուցել,  
վոր իբրև թե պրուսական միասնության, իբրև պետու-  
թյան ամենաբարձր ձևի մեջ, արդեն կատարյալ նույնություն  
է հաստատված անհատի ու պետական կազմակերպությունների  
շահերի միջև, բայց իրոք վերջիններս միշտ ելհանուն բացարձակ  
փոքրամասնության շահերի, ճնշում են հասարակության բա-  
ցարձակ մեծամասնությունը: Այնպես վոր հարցի մարքսիստական  
լուծումը վոչ մի ընդհանուր բան չունի պատմության մեջ  
անհատի դերի բուրժուական ըմբռնման հետ: Յեթև բուրժուա-  
դիայի բանակից վոմանք, հանդես գալով անհատի ֆեոդալական  
կեղեքման դեմ, գնացել են առանձին անհատների դերի ար-  
սոլյուտացման ուղիով, ապա մյուսները, դարձյալ նույն բանա-  
կից, սուբյեկտիվիզմն ու միակողմանի ինդիվիդուալիզմը հազ-  
թահարելու պատրվակով, փաստորեն սկսել են անպատկառուն  
զարգացնել հասարակության ավտոմատ շարժման թեորիան:  
Որինակ՝ ժամանակակից սոցիալ-դեմոկրատները: Պրոլետարիատը  
չէր կարող և չվորդեգրեց այս փտած տեսակետը այն պարզ պատ-  
ճառով, վոր նա հանդես յեկավ իբրև նոր հեղափոխական դասա-  
կարգ, կերտելու նոր պատմությունը և մարդկության համար-  
ստեղծելու նոր ու յերջանիկ կյանք: Կարելի չէ արդյոք, փոփո-  
խել աշխարհը՝ բացասելով անհատի ստեղծարար գործու-  
նեյությունը: Ահա թե ինչու Մարքսն այնպես համոռորեն  
ընդգծել է, վոր «Մարդկային ամեն մի պատմության առաջին  
նախադրյալը հանդիսանում է, հիրավի, կենդանի անհատների  
մարդկանց գոյությունը» (Արխիվ, I, էջ 214): Այս կենդանի  
անհատը, պրոլետարն, իբրև իր դասակարգի անդամ, իբրև յե-  
ղակին համընդհանուրի մեջ Ֆոյերբախի արատրակտ «մարդը»  
չէ, այլ կոնկրետ եակ, նրա պայքարը կապիտալիզմի դեմ կա-  
րող է հաջողությամբ վերջանալ միայն այն ժամանակ, յերբ  
նա կհասնի միջև համընդհանուրի ճանաչումը և իր սեփական  
«գոլիսական գործից» միջև փր յետի համակողմանի գիտակ-  
ցումը:

Բայց իր յեսը գիտակցած պրոլետարը բուրժուական

եզոխտ չէ, վորովհետև նա այդպիսի յեղբակացութեաններէ հանգում ե վոչ թէ իրեն հակադրելով համընդհանուրին, դասակարգին, այլ միայն նրա միջոցով և նրա մեջ: Նրա յիսը դասակարգի սեփականութեանն և և ընդհակառակը, ուստի նրանց միջև հակասութեան չկա: Նույնիսկ ավելին: Իրեն ճանաչելով իբրև իր դասակարգի անդամ, բանվորը դուրս ե գալիս կոսմոպոլիտիզմի ավելի լայն ճանապարհ, նա ստեղծում և սեփական դասակարգային կազմակերպութեաններ, վորոնց միջոցով իրականացնում ե իսկական համալսարանի, ինստիտուցիոնալ—ազատագրական խնդիրներ: «Պրոլետարներ բոլոր յերկրներէ, միացե՛ք» լոզունգը մերժում ե բուրժուական եզոլիզմը, նա պահանջում ե անձնուրացութեան ու նվիրվածութեան բանվորների հեղափոխական գործին, ուստի նա անհատի ազատագրման միակ ճշմարիտ ուղին ե: Այս թվացող հակասութեանը մինչև այժմ ել անհասկանալի յե շատերի համար, բայց Մարքսն ու Ենգելսը կարողացան այդ հասցնել պրոլետարների ամենալայն մասսաների գիտակցութեան և սրա հիման վրա նաև մասսայական կազմակերպական աշխատանք ծավալել նրանց մեջ:

Իր դասակարգային դրութեանը գիտակցած բանվորը չի կարող մենակ գործել, գործողութեաններէ սեպարատիզմը կործանարար ե բանվորների համար, այս պատճառով Ենգելսը տակալին իր «Բանվոր դասակարգի դրութեանն Անգլիայում» գրքում պրոլետարիատի հաղթութեան դրավականը տեսնում եր նրանց համերաշխութեան կազմակերպվածութեան մեջ, պրոլետարներէ միացյալ յելույթների մեջ՝ ընդդեմ բուրժուազիայի: Ուտոպիական սոցիալիզմի ներկայացուցիչները պակաս խըստութեամբ չեյին քննադատում կապիտալիստական հասարակարգը, վատ չեյին հաշտարեղում վերջինի բացասական կողմերը, հետևաբար քիչ չեյին ոգնում բանվորներին՝ գիտակցելու իրենց կեղեքված վիճակը, բայց նրանք չհասան պրոլետարական կազմակերպութեանների անհրաժեշտութեան գիտակցութեանը: Ֆուրյեիստները Ֆրանսիայում, Ուոլինի հետևորդներն Անգլիայում դտնում եյին, վոր բանվորները չպիտք ե միանան կոալիցիաների մեջ, նրանք քաղաքականութեամբ չպիտք ե զբաղվին: «Կոալիցիաներ սարքել նշանակում ե զբաղվել քաղա-

քականութեամբ», մինչդեռ քաղաքականութեանն «ազնվական» բուրժուաների գործն ե, սոցիալիստը քաղաքագետ չէ, նա առանց քաղաքականութեան ել կարող ե բարելավել պրոլետարիատի դրութեանը,—հավատացնում եյին ուտոպիստները: Իսկ բուրժուազիայի որհնելողները վճռապես մերժում եյին բանվորական կոալիցիաներ ստեղծելու անհրաժեշտութեան ամեն մի միտք: «Յուրաքանչյուր առանձին բանվորի ազատութեանը, տնորինելու իր անձը... կարելի յե հանդուրժել, իսկ հասարակութեանը չի կարող թույլ տա բանվորներին կոալիցիաների միջոցով բոնութեան գիմելու մոնոպոլիայի նկատմամբ»,—գրում եր Պրուդոնը: Այս նշանակում ե, վոր բանվորի ինքնագիտակցութեանը չի կարող և չպիտք ե ավելի բարձրանա, քան արդի հասարակութեան հարաբերաբայունների քեորիական մակերեսային հայեցաբայունը: Մարքսն ու Ենգելսը դտնում եյին, վոր դա զբաղարտութեան ե հեղափոխական պրոլետարիատի հասցեյին: «Հակառակ դասագրքերի և ուտոպիաների,—գրում եր Մարքսը, կոալիցիաները վոչ մի բոպե չեյին դադարում առաջ գնալ և մեծանալ ժամանակակից արդյունաբերութեան դարգացման ու աճման հետ միասին»: 1) Նույն բանն ե տեղի ունենում նաև այժմ, յերբ սոց.-դեմոկրատ բանվորները, հակառակ իրենց առաջնորդների կամքի, ձգտում են միավորելու իրենց թուրքերը բուրժուական ռեակցիայի դեմ: Յեյնելով այս փաստից, կոմինտերնի VII կոնգրեսն իր բանաձևում գրում ե, վոր «Բանվոր դասակարգի պայքարի միասնական ճակատի իրականացումը պատմական ներկա եսպում հանդիսանում ե միջազգային բանվորական շարժման գլխավոր, մերձավոր խնդիր» (ընդգծումը բնագրերինն ե) հետևաբար, ինքնագիտակցումը մի պրոցես ե, վոր չի դադարում և առհասարակ չի կարող հավիտեանապես կանգ առնել միջկլմունյ կեսում, քանի վոր նա սկսված ե: Քանի վոր տընտեսական պայմաններն ազգաբնակչութեան մասսան վերածել են բանվորների, քանի վոր «Կապիտալի գերիշխանութեանն այս մասսայի համար ստեղծել և միատեսակ դրութեան և ընդհանուր շահեր» և նրանք հասել են այս բոլորի գիտակցութեան մինչև իրենց հակադրումը կապիտալին և, վերջապես, մինչև

1) Մարքս և Ենգելս, V հ. եջ 415:

իրենց «սահմանադրումը» այս պայքարում իբրև դասակարգի, անմտություն կլինեն բանվորներից պահանջել, վոր նրանք չդիմեյին իրենց կազմակերպությունները ստեղծմանը, կազմակերպված պայքարի՝ բուրժուազիայի դեմ: Ուստի «պրոլետարները բոլոր յերկրները, միացե՛ք» լոզունգը պատահական ու պարզ լոզունգ չէր, այլ պրոլետարիատի դասակարգային պայքարի անհրաժեշտ արդյունքը, վոր վկայում էր ինքնագիտակցության այն նոր աստիճանի մասին, վորին հասավ բանվորությունը Մարքսի ու Ենգելսի ղեկավարությամբ:

Յերբ գեթ հիմնականում հաղթահարվեցին բուրժուական այն նախապաշարմունքները, թե իբր այսպես կոչված «չորրորդ դասը» անընդունակ է ինքնուրույն կյանքի, և նամանավանդ ինքնուրույն կերպով իր պայքարը ղեկավարելու, յերբ պրոլետարիատը հասավ իր կազմակերպություններն ստեղծելու գիտակցության աստիճանին, այդ ժամանակ, նշված լոզունգը իրոք վոր դարձավ հասարակությունը վերակառուցելու նյութական խոշոր ուժ:

Բանվորների ազատագրումը կարող է լինել իրենց՝ բանվորների գործը: Այսպես դրին հարցը Մարքսն ու Ենգելսը «Կոմունիստական Մանիֆեստում»: Այս նշանակում է, վոր նրանք հակառակ ուտոպիստների ու բուրժուական սոցիալիստների՝ պրոլետարիատի «պատմական» հեղափոխական ինքնագործունեյությունը համարեցին միակ հուսալի միջոցը, կամ ուղին՝ կապիտալիստական ստրկության վոչնչացման համար: «Պրոլետարիատը լայն մասսաների մեջ կոմունիստական կուսակցությունների ուժից ու ազդեցությունից միայն, կոմունիստների ենեղիայից ու անձնուրացությունից է կախված հասունացած քաղաքական նգնաժամը պրոլետարիատի հաղթական հեղափոխության վերածելը» — գրում է Կոմինտերնի VII կոնգրեսը շարունակելով Մարքսի ու Ենգելսի գործը:

Վոչ մի տարակույս չկա, վոր կապիտալիզմն ինքն է բանվորներին դրդում միավորվելու, իրենց ուժերը միացնելու կոալիցիաների մեջ, — ասում է Ենգելսը: Բայց գերիշխող դասակարգը ջանում է այս ասոցիացիաներին տալ զուտ ազգային բնույթ, ոգտագործել դրանք սեփական ազգայնական նպատակներով: Բոլոր բանվորական կազմակերպությունները չեն, վոր

կարողացել են հաղթահարել բուրժուական այս նացիոնալիզմը կամ գիտակցարար ընթացել դրա դեմ: Ֆրանսիայում պրոլետարիատները, գերմանիայում «խակական» սոցիալիստները հանձին Գրյունի և մյունխենի պաշտպանում են բուրժուական և մանրբուրժուական մասսաների շահերը: Վոչ թե պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրներն են այս կազմակերպությունների ուշադրության կենտրոնը, այլ «գերմանական ազգի նորմալությունն» ապացուցելը, կամ «գերմանական ֆիլիստերին նորմալ մարդ» հռչակելը, ասում է Մարքսը: Ուստի միանգամայն հասկանալի յե, վոր գիտակից բանվորները չեն կարող իրենց իսկական դասակարգային ինքնագիտակցության հասնելը չշաղկապել բուրժուական նացիոնալիզմի հաղթահարման հետ:

«Մեծագույն գոհունակությամբ յես համոզվեցի, վոր դուք զերծ եք ազգային նախապաշարմունքների ու ազգային սնափառության այս կործանարար անեծքից, վորոնք վերջի-վերջո հանդիսանում են սոսկ մերկ եգոիզմ»: «Յես համոզվեցի, վոր դուք ավելին եք, քան միայն անգլիացիներ, մի մեկուսացած ազգի անդամներ, վոր դուք մարդիկ եք, մարդկային մի մեծ ընտանիքի անդամներ, վորոնք հասկանում են, վոր ձեր շահերը համընկնում են ամբողջ մարդկության շահերի հետ»: Այսպես էր գրում Ենգելսը Մեծ Բրիտանիայի բանվոր դասակարգին ուղղած իր կոչում: Կնշանակել, շովինիզմի արմատախլումը՝ բանվորների ինքնագիտակցության ավելի բարձր աստիճան է, վորին պետք է ձգտեն բոլոր պրոլետարական հեղափոխականները: Յերբ Մարքսն ու Ենգելսը գոյություն ունեցող կոմունիստական կազմակերպությունները հակադրում էյին ուրիշ բանվորական կազմակերպությունների, ապա նրանք առաջիններին մի եական առանձնահատկությունը տեսնում էյին նրանում, վոր նրանց ներկայացուցիչները «զանազան ազգերի պրոլետարներին շարժման մեջ դատում ու պաշտպանում են ամբողջ պրոլետարիատի ընդհանուր, ազգությունից անկախ շահերը»: <sup>1)</sup> Այս նշանակում է, վոր առանց ազգայնական նախապաշարմունքներից ազատվելու իսկական ինտերնացիոնալ շարժումն անկարելի յե: Ահա թե ինչու Կոմինտերնի VII կոնգրեսն ընկ. Դիմիտրո-

1) Մարքս և Ենգելս, V հ. էջ 495:

վի գեկուցման առթիվ բանաձևում գրում ե. «Նկատի ունենալով, վոր ֆաշիստական իդեոլոգիայի գլխավոր, ամենավտանգավոր ձևը հանդիսանում է շովինիզմը, անհրաժեշտ է մասսաների առջև բացահայտել, վոր ֆաշիստական բուրժուազիան համազգային շահերի պաշտպանութան պատրվակով իրականացնում է սեփական ժողովրդի կեղեքման ու շահագործման, ինչպես և ուրիշ ժողովուրդների կողոպտման ու հարստահարման իր դասակարգային շահասիրական քաղաքականութունը:»

Սոսեթով XIX դարի առաջին կեսի վերջերի բանվորական շարժման վիճակի մասին, Մարքսն ու Ենգելսը նշում են, վոր անդլիական պրոլետարները հիմնականում կարողացել են իրենց հաշիվները մաքրել նացիոնալիզմի հետ, այս պատճառով նրանց հաջողվել է իրենց կազմակերպութուններում արմատացնել ավելի ինտերնացիոնալ բովանդակութուն և նեղ տնտեսական հարցերից բարձրանալ մինչև քաղաքական խնդիրների լուծման մակարդակը:

Սակայն, բուրժուազիան ամեն կերպ ջանում էր պրոլետարիատին հետ պահել քաղաքական կյանքից: Պրուդոնն սկսեց ապացուցել, վոր բանվորական ասոցիացիաներն ու գործադուլներն «ապուրինի յն», վորովհետև այս մասին «ասված է քրեական որենսգրքում»: Ժխտելով այս թեզիսը, Մարքսն ու Ենգելսը սովորեցրին բանվորներին, վոր առանց քաղաքական պայքարի անմտութուն է վորևե ազատագրական շարժում: Պրոլետարիատն ուզում է բարելավել իր դրութունը, սրա համար նա միավորում է իր ուժերը և պայքարի մեջ մտնում բուրժուազիայի դեմ, վորը չի ուզում կամավոր կերպով հրաժարվել իր լեկամտի վորևե բաժնից՝ հոգուտ բանվորներին, իսկ այստեղ արդեն առաջանում է «իսկական քաղաքացիական պատերազմ», վորի մեջ «միավորվում և զարգանում են ապագա մարտերի բոլոր անհրաժեշտ տարրերը»,<sup>1)</sup> գրում է Մարքսը: Այսպիսով իր դասակարգային դրության գիտակցութունից պրոլետարիատը բարձրանում է մինչև քաղաքական պայքարի անհրաժեշտության ընդունումը, մինչև քաղաքական գիտակցության աստիճանը:


Քաղաքական գիտակցութունը մի նոր հատկութուն է

1) Մարքս և Ենգելս, V հ. էջ 415:

1901  
3997  
7697

բանվոր դասակարգի ինքնագիտակցության մեջ, վորին հասնելով նա արդեն կազմակերպվում է քաղաքական կուսակցութունների մեջ և բացահայտ պայքարի մեջ մտնում բուրժուազիայի դեմ, շահագործողների տիրապետությունը տապալելու և քաղաքական իշխանութունը նվաճելու համար: Այստեղ, ինքնագիտակցության այս մակարդակի վրա հաղթահարվում է վոչ միայն սոցալիզմի հիմնականում նմանապես արստարկտ համընդհանրութունը: Յեթե ինքնագիտակցության առաջին աստիճանի վրա պրոլետարիատը հանդես յեկավ միանգամայն անկազմակերպ, նրա պայքարը կապիտալիզմի դեմ մանր «հանցագործութունների» ձև ուներ (մեքենաները ջարդելու ժամանակաշրջան), յերկրորդ ետապում սկսեց կազմակերպվել զանազան կոալիցիաների, ասոցիացիաների մեջ և այլն, բայց իր ազատագրության իսկապես կանկրես ուղիմ տակավին չգտավ և ուտոլիական սոցիալիզմի գերիշխանության շրջանն նուսն էր, յերբ «ապագա հասարակության փաստական նկարագրութունը» կենտրոնական հարց էր դառել և մարդկության լավագույն միտքն զբաղված էր ավելի շատ ապագա «դրախտի» նկարագրությամբ, քան կապիտալիստական ստրկության դեմ պայքարելու և զենքերն ու միջոցները կոնկրետ նշելով: Իսկ պրոլետարիատի քաղաքական ինքնագիտակցության շրջանը հենց բուրժուական ու մանր-բուրժուական այս պատրանքների հաղթահարման շրջանն է, յերբ բանվոր դասակարգը վերջնականապես անցնում է քաղաքական պայքարի, այսինքն՝ հասարակության գործնական փոփոխության ուսել գործին:

Իրյուսելի Հարաբերութունների կոմիտեյին գրած նամակում Ենգելսն ասում է. «Իրյուսելցիները և առհասարակ բոլոր բուրժուական և մանր-բուրժուական ֆիլիստերները դեմ են պրոլետարիատի քաղաքական պայքարին, դեմ են բռնի հեղափոխությանը: Մերկացնելով «իսկական սոցիալիզմի» ուսակցիոն էյությունը, յես այսպես ձևակերպեցի կոմունիստների մտադրութունները, 1) պրոլետարների շահերի պաշտպանութուն ի հակադրութուն բուրժուականների շահերի, 2) սրան հասնել մասնավոր սեփականութունը վերացնելու և այն գույքերի հանրայնությամբ փոխարինելով, 3) ընդունել, վոր այս նպատակներին հասնելու համար չկա վոչ մի այլ միջոց, քան բռնի



գեմոկրատական հեղափոխութիւնը»<sup>1)</sup> Տակալին սրանից  
յերկու տարի առաջ (1844 թ.) Մարքսին ուղղած իր նամակում  
Ենգելը բանվոր դասակարգին նախազգուշացնում է անպը-  
տուղ արատրակցիայի վնասակարութիւնն ից: Անհավանական չե-  
վոր գերմանական ֆիլիստերները «Ֆուրյէին կվերամշակեն հե-  
գելյան ձևով,—գրում է Ենգելը,—Ֆալանստերները կկառուցեն  
հավերժական գաղափարներից և իրեն վերադարձող գաղափար-  
ների հավերժական որենքի ձևով կապացուցեն, վոր կապիտա-  
լըն ու աշխատանքը պիտի ստանան յեկամտի վորոշակի  
բաժին»: Յեղ «սա կղառնա հեգելականութեան նոր կտակարան,  
հին Հեգելը կղառնա հին կտակարան, «պետութիւն», որենքը  
կղառնա «քրիստոնեութեան վրա վերահսկիչ», իսկ Ֆալանստերը,  
վորտեղ արտաքնոցները կտեղաբաշխվին տրամաբանական ան-  
հրաժեշտութեան կարգով, կղառնա «նոր յերկինք», «նոր յերկիր»  
նոր Յերուսաղեմ, վորը յերկնքից իջնում է իրրե պճնաղարդ  
հարս, վորի մասին մենք մանրամասն կկարդանք նոր հայտնու-  
թեան մեջ»<sup>2)</sup> Աշխատավոր մասսաներին այսպես հիմարաց-  
նելով սկսեցին զբաղվել վոչ միայն այսպես կոչված  
յերիտասարդ հեգելականները, այլ և հետագայում բանվոր-  
րական կազմակերպութիւնների մեջ թափանցող բոլոր բուրժուա-  
կան և ոպորտունիստական տարրերը: Ուստի պրոլետարիատի  
հեղափոխական գաղափարները դեհեգելացման դեմ մղվող պայ-  
քարը պայքար եր նրա իսկական ինքնագիտակցութեան համար,  
նրա դասակարգային պայքարի կոնկրետ խնդիրներ ըմբռնման  
ու իրականացման համար: Մասնավոր սեփականութեան վե-  
րացման պահանջը, բուն հեղափոխութեան անհրաժեշտու-  
թեան ընդունումը հսկայական քայլ եր առաջ, ինչպես բան-  
վորների ինքնագիտակցութեան բարձրացման, այնպես և  
պրոլետարիատի հիմնական գաղափարները համար պայքարելու  
ուղիների և լողունների ավելի կոնկրետացման իմաստով:

Սակայն դեռևս ծերուկ Հեգելն ապացուցել է, վոր իսկա-  
կան ինքնագիտակցութիւնը չի բավականանում եմպիրիզմի  
ձևական հաղթանարումով: Առանձին փաստերի հավաստումը,  
ընդհանրացումներին անցնելն ինքնագիտակցութեան առաջին

1 Մարքս և Ենգելս, XI հ. էջ 49:

2 Մարքս և Ենգելս, XXI հ. էջ 8:

ետապն է սոսկ, իսկ գիտական իմացութեանն ավելի հեռուն  
գնալով, «տալիս է որչեկան իր անհրաժեշտութեան մեջ, իր  
համակողմանի հարաբերութիւններում, իր հակասական շարժ-  
ման մեջ և իր համար»<sup>1)</sup> ուրիշ խոսքով արատրակցիայից  
անցնելով գործնականին,<sup>2)</sup> բացահայտում է առարկայի կոնկրետ  
բովանդակութիւնը, նրա շարժման որենքները և ցույց է տա-  
լիս ընդհանուրի գարգացման ուղիները: Անկազմակերպ «պար-  
տիզանական» պայքարից անցումը կազմակերպված քաղաքական  
յերուկայներին, կուսակցական պայքարին, իրրե դասակարգային  
պայքարի ամենաբարձր ձևի, հումանիստական ընդհանուր խո-  
սակցութիւններից, բանվորների դրութիւնը բարելավելու  
մտահորութիւնից բուն հեղափոխութեան անցումը վնասկան  
քայլ եր առաջ պրոլետարիատի հետագա պայքարի լայն ճանա-  
պարհները վերջնականապես բացելուն մոտենալու իմաստով: Սա-  
կայն հարցի արմատական լուծման համար հարկավոր եր ավելի  
ճշգրիտ վորոշել «ցանկալի առարկան», հարկավոր եր առաջարկել  
կապիտալիզմի դեմ պայքարելու ավելի կոնկրետ ձևեր ու միջոց-  
ներ: Այն, ինչ ասում եր Ենգելս իր 1844 թ. նամակում, դեռևս  
չափազանց արատրակտ եր: Դեմոկրատիան և դեմոկրատական  
հեղափոխութիւնն առհասարակ շատ առաձգական հասկա-  
ցողութիւն են: Դեմոս—սա վոչ միայն պրոլետարիատն է  
այլև մանր-բուրժուազիան, այս պատճառով ամեն մի դեմոկրա-  
տական հեղափոխութիւն անպայման չպետք է լինի պրոլետա-  
րական, հետևաբար հարկավոր եր ավելի ճշեղ այս հասկացու-  
թիւնը, հարկավոր եր սովորեցնել պրոլետարիատին պայքարելու  
վոչ թե առհասարակ դեմոկրատիայի համար, այլ հատկապես  
պրոլետարական դեմոկրատիայի համար:

Ընկեր Ստալինն ասում է, վոր «Պրոլետարական հեղափո-  
խութեան հիմնական բովանդակութիւնը պրոլետարիատի դիկ-  
տատուրան է»<sup>3)</sup> Ուստի, չերբ բանվոր դասակարգը հասել է  
հեղափոխութեան կատարելու անհրաժեշտութեան գիտակցու-  
թեանը, բաց ճշգրիտ չի իմացել ինչով փոխարինել հին մեքե-  
նան, կարելի չե ասել, վոր նրա գիտակցութիւնը դեռևս բավա-

1) Լենին, Փիլիսոփայական տեսակետներ, էջ 202:

2) Նույն տեղում, էջ 166:

3) Ստալին, Լենինի դեմ հարցերը, ուսու. 1933 թ. հրատ, էջ 193:

կանաչափ կոնկրետ բովանդակութիւն չունի: Գիտակցութիւնը կոնկրետանում է, նա դառնում է բովանդակալից, յերբ պարզ պատկերացում է իմացութեան որչեպտը, յերբ յուրացվում է սովյալ պրոցեսի մեջ ետեւանք, գլխավորը, վարձուլը և սա դիտվում է վոչ միայն անցյալի այլև ապագայի տեսակետից: Յերբ մանր-բուրժուական հեղափոխականները մոլեգնելով բուրժուական կարգերի դեմ միակ յեւքը գոյութիւն ունեցող դրութիւնից տեսնում էյին բուրժուական պետական ապարատը խորտակելու մեջ՝ չփոխարինելով նրան վորեւե ուրիշ բանով, նրանք վարվում էյին իբրև սողացող եմպիրիկներ, յերևույթները դիտում էյին միայն մի կողմից, անցյալի կողմից, վերցնում էյին դիկտատուրան առհասարակ, և վոչ թե կոնկրետ բուրժուական դիկտատուրան, վորպեսզի նրան հակադրեյին պրոլետարիատի դիկտատուրան: Այսպիսի գիտակցութիւնն, իհարկե, չեր կարող լինել կոնկրետ, բովանդակալից (պրոլետարիատի տեսակետից) գիտակցութիւն: Լենինն ասում է, վոր իսկական գիտելութիւնը մատերիայի իմացութեան խորացումն է մինչև սուբստանցի իմացութիւնը (մինչև բարձրացումը), վորպեսզի գտնվի յերևույթների պատճառը: Իսկ այս «պատճառների իսկական իմացութիւնն է իմացութեան խորացումը յերևույթների արտաքինից դեպի սուբստանցը»: <sup>1)</sup> Այն հանգամանքը, վոր Մարքսն ու Ենգելսը գտան «կապիտալիստական հասարակութեան» բլիշը և կարողացան այս գյուտը վերածել «նյութական ուժի» հասարակութեան փոփոխութեան համար՝ հնարավորութիւն սովեց նրանց ավելի առաջ գնալ և բանվոր դասակարգին սովորեցնել, թե ինչպես վարվել հին մեքենայի հետ և ինչով կարելի յե ու պետք է փոխարինել այն: «Բանվորական հեղափոխութեան առաջին քայլը պիտի լինի պրոլետարիատի բարձրացումը գերիշխող դասակարգի աստիճանին, դեմոկրատիայի նվաճում»: Ահա մարքսիզմի տեսակետը:

Պրոլետարիատը կողմի իր քաղաքական գերիշխանութիւնից, վորպեսզի բուրժուազիայից աստիճանաբար խլի ամբողջ կապիտալը, վորպեսզի աշխատանքի բոլոր գործիքները կենտրոնացնի պետութեան ձեռքին, այսինքն իբրև գերիշխող

<sup>1)</sup> Լենին, Փիլիսոփայական տետրակներ, էջ 155:

դասակարգ կազմակերպված պրոլետարիատի ձեռքին և հնարավորութեան չափ արագ մեծացնի արտադրողական ուժերի քանակը, դրում են Մարքսն ու Ենգելսը «Կոմունիստական Մանիֆեստում»: Այսպիսով, դեմոկրատիայի վերաբերյալ բարտրակա դատողութիւնները ավելի ճշտվում ու վորոշակի յեն դառնում: Մեզ հարկավոր է պրոլետարիական դեմոկրատիա, մեծամասնութեան դիկտատուրա փոքրամասնութեան վրա, հայտարարում են Մարքսն ու Ենգելսը «Կոմունիստական Մանիֆեստում»: Յեւլ առհասարակ կարելի յե ասել վոր «Կոմունիստական Մանիֆեստի» հրատարակումով մի նոր դարաշրջան բացվեց վոչ միայն բանվորական շարժման, այլև մարդկային վողջ պատմութեան մեջ: Բուրժուական—լիբերալ այն պատկերացումը, վոր քաղաքականութեան հետագա պրոգրեսի հիմքը դասակարգերի համագործակցութիւնն էր համարում, հասարակութեան խաղաղ ներդաշնակ զարգացումը՝ պրոլետարիատը բուրժուազիային յենթարկելու միջոցով, վերջնականապես հերքվեց: «Բուրժուական հարաբերութիւններն» արդեն «չափազանց նեղ են դառնում իրենց ստեղծած հարստութիւնը տեղափոխելու համար», <sup>1)</sup> այս պատճառով ել զանազան նորոգութիւնները յերեք չեն սգնի «խախտված» կապիտալիզմին լուծելու ժամանակակից հասարակութեան արձատական հարցերը: Գոյութիւն ունեցող դրութիւնից դուրս գալու համար հարկավոր է հաղթահարել կապիտալիզմի նեղ շրջանակները, խորտակել բուրժուական կարգերը, վորի համար ուժ ունի միայն պրոլետարիատը, իբրև արդի միակ հետևողական—հեղափոխական դասակարգը: Պրոլետարիատի, իբրև դասակարգի գոյութիւնը «կապված է... պայքարի պատմական վորոշակի ձևերի հետ», վորոնք հատուկ են բուրժուական արտադրութեան «զարգացմանը», վորը չի կարելի վերացնել սուբյեկտիվ ցանկութիւններով կամ լավ մտադրութիւններով: Այսպիսի պայքարի առկայութիւնն «անխուսափելիորեն տանում է դեպի պրոլետարիատի դիկտատուրան», իսկ «պրոլետարիատի դիկտատուրան ինքը միայն հանդիսանում է անցում

<sup>1)</sup> Մարքս և Ենգելս, V հ, էջ 489:

դեպի բոլոր դասակարգերի վոչնչացումը և այնպիսի հասարակարգի հաստատումը, վորտեղ դասակարգերի բաժանումը չի լինի»<sup>1)</sup>, դրում է Մարքսը Վեյգմեյերին: Այսպիսով դեկտատուրայի անհրաժեշտությունը գիտակցությունից ծագեց մարդկային հասարակության հետագա բախտի մի ամբողջ պլան, գիտակցությունն արդեն հետզհետե սկսեց թափանցել զանազան նրբությունների մեջ, դրսևորել նոր կողմեր, նոր հատկություններ իր որչեղտի մեջ, ցույց տալ հասարակության շարժման իսկական որինաչափությունը, սրանով իսկ ավելի կոնկրետացնելով իր սեփական բովանդակությունը: Ուստի, մենք կարող ենք ասել, վոր լեթե բանվորական շարժման զարգացման առաջին ետապում պրոլետարիատի գիտակցությունը վորոշ իմաստով առարկայազուրկ էր, վորչափով վոր դեկտատուրայի գաղափարն առաջիմ բացակայում էր նրա մեջ, «Կոմունիստական Մանիֆեստով» նա բարձրացավ ինքնագիտակցության մի նոր աստիճան, գտնելով իր իմացության առարկան: Առհասարակ լենինյան այն խոսքերի խոր իմաստը, վոր Մարքսն ու Ենգելսը բանվոր դասակարգին սովորեցրել են ինքնաճանաչում և ինքնագիտակցություն, կարելի չէ բժբնել ամբողջությունը պատկերացնելով այն բեկման նշանակությունը, վոր պրոլետարիատի գիտատուրայի լողունգն առաջացրեց ամբողջ հասարակության, առաջին հերթին աշխատավորական մասսաների գիտակցության մեջ: Չե վոր մինչ այդ զանգան կալիբրի գիտնականները վստահացնում էին, վոր պետությունը վերադասակարգային կազմակերպություն է, վոր դա խաղաղություն և կարգի կազմակերպություն է, վորին չի կարելի և չպետք է ձեռք տալ: «Կոմունիստական Մանիֆեստում» առաջին անգամ «ամփոփվեցին պատմության ընդհանուր հանրադրումները, վորոնք ստիպեցին պետություն մեջ տեճնել դասակարգային գերիշխանության որդան» և պրոլետարիատին բերին այն անհրաժեշտ յեղրակացություն, վոր ինքն անկարող կլինի բուրժուազիային տապալել, յեթե չնվաճի քաղաքական իշխանությունը, պետությունը չվերածի շահագործող դասակարգերը

1) Մարքսի և Ենգելսի նամակները՝ Ադորացկու խմբ., էջ 42:

ճնշելու և վոչնչացնելու մի գեճքի: Սակայն «Կոմունիստական Մանիֆեստը» գճեց պրոլետարիատի պայքարի բնդիսանուր կոնսուլները միայն, ցույց տվեց պրոլետարիատի դեկտատուրայի ընդհանուր ուղին, տվեց նրա ընդհանուր գաղափարը, չհարուցելով այն հարցը «Թե ինչպիսին պիտի լինի, պատմական զարգացման տեսակետից, բուրժուական պետության այս փոխարինումը պրոլետարականով»: <sup>1)</sup> Իր ընդհանրությունը «Կոմունիստական մանիֆեստի» մակարդակի վրա պրոլետարիատի ինքնագիտակցությունը շատ բանում գեռես բավականաչափ արատրակտ էր: Պրոլետարիատի դեկտատուրայի գաղափարը կարիք էր զգում ավելի կոնկրետացման թեկուզ այն բանում, թե «բանվոր դասակարգը կարող է արդեք ուղղակի արբանալ պատրաստի պետական մեքենային և նրան գործի դնել իր սեփական նպատակների համար», թե վոչ:

Լենինն ասում է, վոր գիտական իմացությունը «կենդանի հայեցողությունից» գնում է դեպի «արատրակտ մտածությունը և նրանից դեպի պրակտիկան»: Միայն պրակտիկան է սպացուցում, մտածության ճշմարտությունը, միայն նրան ուսումնասիրելու հիման վրա կարելի է կոնկրետացնել ամեն մի հասկացողություն, կարելի է խորանալ հասարակության և բնության իմացության մեջ, խորանալ այս վերջիններիս փոփոխություն գործիքներին: Ունենալով իր դեկտատուրայի վերաբերյալ միայն ընդհանուր գաղափարներ, իմանալով իր պայքարի միայն ընդհանուր ուղին, պրոլետարիատը պետք է ձգտեր, գործնապես կիրառելով այս գաղափարները, նոր քայլեր անել ինչպես դեպի ընդհանուր հասկացողությունների ավելի կոնկրետացման, այնպես էլ նրանց իրականացման կողմը: 1848—1851 թթ. հեղափոխության փորձի հիման վրա Մարքսն ու Ենգելսը սովորեցրին պրոլետարիատին, վոր դասակարգային պայքարի առկալության ընդունումը գեռես ամբողջը չէ, վոր այդ նույնիսկ վոչինչ չի տալիս բանվոր դասակարգին, վորովհետև բուրժուազիայի բոլոր հեղափոխական մտածողներն ընդունելով այս,

1) Լենին XXI է., էջ 388:

այնուամենայնիվ, վոչ մի քայլով չնահանջեցին իրենց դասակարգի շահերից, հետևաբար, պրոլետարական մտածողը պետք է «դասակարգերի պայքարի ընդունումը տարածի մինչև պրոլետարիատի դիկտատուրայի ընդունումը»: Մա իրոք քայլ է դեպի առաջ, մի քայլ, վոր ցույց է տալիս բանվոր դասակարգին, վոր նրա կազմակերպվածութունն, իբրև գերիշխող դասակարգի «հանդիսանում է նրա դիկտատուրայի, նրա հեգեմոնիայի ստեղծումը մնացած դասակարգերի նկատմամբ», ուսուցանեցին դիտական կոմունիզմի հիմնադիրները: Իսկ մի քիչ ավելի ուշ, յեխելով Փարիզի կոմունայի փորձից, նրանք արդեն պատասխանեցին այն հարցին, թե ինչպես և ինչ միջոցներով պրոլետարիատը կարող է հաստատել իր դիկտատուրան: Վոչ թե պարզապես տիրանալու միջոցով, այլ ջարդելով հին ապարտը և փոխարինելով այն նորով բանվոր դասակարգը կարող է հասնել իր նպատակներին, հայտարարեցին Մարքսն ու Ենգելսը 1872 թ. «կոմունիստական Մանիֆեստի» նոր հրատարակության առաջաբանում: Այսպիսով պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր գաղափարից աստիճանաբար աճեց մտքերի մի ամբողջ սիստեմ, մի ամբողջ գիտություն արդի հասարակության նոր հեղափոխական դասակարգի պայքարի ուղիների ու միջոցների վերաբերյալ: Խորացնել այս գիտությունը, դարգացնել, դարձնել բոլոր բանվորների սեփականություն, կազմակերպել սրանց և այս գիտության սկզբունքների հիման վրա հեղափոխական գործնական աշխատանք ծավալել այս սկզբունքների իրականացման համար,—ահա թե ինչ էր նշանակում «պրոլետարիատին սովորեցնել ինքնաձանաչում և ինքնագիտակցություն»:

1864 թ. գրած իր նամակում Մարքսը խնդագին հաղորդում է Ենգելսին, թե ինչպես իրեն հաջողվել է «մեր հայացքներն» անցկացնել I Ինտերնացիոնալի գլխավոր խորհրդում, թե ինչպես նա մերժել է «Բարի Լե Լյուբեյի միանգամայն տհաս ներածությունը», վորի մեջ «ամեն մի քայլափոխում չերևում էր Մադձինին» և գրել էր նոր «գլխումը բանվոր

դասակարգին», զարգացնելով նոր սկզբունքներ, ժամանակակից պրոլետարական շարժման սկզբունքները:

Այս շարժման, 1848 թ. հեղափոխության, ինչպես և Փարիզի կոմունայի փորձը կրկին հաստատեցին այն թեզիսը, վոր պրոլետարիատն իշխանության կարող է հասնել բուրժուազիայի բռնի տապալումով և իր դիկտատուրան կազմակերպելով միայն:

«Հեղափոխությունը մի ակտ է, վորով ընակչության մի մասն իր կամքը պարտադրում է մյուս մասին հրացանների, սվինների միջոցով, այսինքն՝ չափազանց հեղինակավոր միջոցներով: Յեկ հաղթանակող կուսակցությունն անհրաժեշտաբար ստիպված է լինում իր գերիշխանությունը պահանջելու այն սարսափի միջոցով, վոր ռեակցիոներներին ներշնչում է նրա զենքը: Յեթե Փարիզի կոմունան չհեղինակվեք զինված ժողովրդի հեղինակության վրա ընդդեմ բուրժուազիայի, ապա մի՞թե նա մի ուրից ավել կհեղինակվեք: Մի՞թե իրավացի չենք մեք, ընդհակառակը, պարսավելու կոմունային նրա համար, վոր նա չափազանց քիչ էր ոգսվում այս հեղինակությունից», այսինքն՝ զենքից, գրում է Ենգելսը մի այլ տեղ: (Ընդգծումը մերն է): Այս նշանակում է, վոր հարկավոր էր բանվորներին գիտակցությունից արմատախիլ անել այն միտքը, ըստ վորի իրենց ազատագրության գործը նրանք կարող են վստահել ուրիշներին: «Գերմանական բանվորներին ամենից ավելի հարկավոր է, վոր նրանք մոռանան միայն իշխանավորների թույլտվությամբ ազիտացիա անելու սովորությունը: Բյուրոկրատաբար վարժեցված այս ռասսային անհրաժեշտ է անցնել «ինքնապաշտպանության լիակատար դասընթացը» գրում էր Մարքսը Ենգելսին: Իսկ մի ամիս անց Շվեյցերին գրած նամակում Մարքսը կրկին մեղադրում էր Լասսալին նրանում, վոր նա «իր ազիտացիայի կենտրոնակետը դարձրել է պետական ոգչությունն ի հակադրություն ինքնոգչության»<sup>1)</sup> Բանվորների միտքը զրդել դեպի ինքնոգչություն, նշանակում է մի-

<sup>1)</sup> Մարքսի և Ենգելսի նամակները՝ Ադորպակո խմբ. էջ 186, 106:

լիոնները գիտակցութեան մեջ արմատացնել ակտիվութիւնն և ինքնավստահութիւնն իր պայքարի վերաբերմամբ:

Բանն այն է, վոյր բուրժուական պիտութիւնը Հեգելի աղղեցութեամբ յերկար ժամանակ սովորեցնում էր, թե «ճշմարտութիւնն... ավտոմատ է, վորն ապացուցում է ինքն իրեն, մարդուն միայն մնում է հետևել դրան»:<sup>1)</sup> Այստեղից յեզրակացութիւն, վոր ինչպես ճշմարտութիւնը, կոմունիզմն էլ պետք է ապացուցի ինքն իրեն, իբրև ինքնաբերաբար հայտնվող նպատակ, նա անխուսափելիորեն կգա, ուստի ակտիվ դասակարգային քաղաքական պայքարի անհրաժեշտութիւնն չկա: Այսպես ելին մտածում նույնիսկ բոլոր սոցիալիստները մինչև Մարքսը, հենց այսպես են փաստարկում իրենց լաիքը պրակտիկան արդի սոցիալ-դեմոկրատական դավաճանները: Հեղափոխական պրոլետարիատի մեծ ուսուցիչները հենց սկզբից հանդես յեկան այս արխիբուրժուական թեորիայի դեմ, հանդես յեկան այն մարտական լողունգով, վոր «վոչ թե քննադատութիւնը, այլ հեղափոխութիւնն է պատմութեան շարժիչ ուժը»: Հեղափոխութիւնը ինքնին չի արվում, այն անում են մարդիկ, կենդանի ինդիվիդները, բանվոր դասակարգը, իբրև բուրժուական հասարակութեան ամենատառջավոր դասակարգ: Յեթե իտալական հուշակավոր մտածող Վիկտոր համար պատմութիւնն աստվածային պլանի իրականացումն էր, չեթե Հեգելն ըստ էյութեան չմերժելով այս սկզբունքը, կարծում էր, թե մարդկանց գործողութիւնները նախապես կանխորոշված նպատակահարմար գործողութիւններ են, Մարքսն ապացուցում է հենց հակառակը. նա ցուց է տալիս, վոր սուբյեկտն իր գործողութիւնները մեջ իրականացնում է միայն իր նպատակը և վոչ թե ուրիշների: Ճիշտ է, այս նպատակն «իբրև որենք վորոշում է նրա գործողութիւնները յեղանակն ու բնութիւնը», սակայն նա ամբողջութեամբ յեթակա յե սուբյեկտի կամքին: Սուբյեկտն ունենալով նպատակահարմար կամք, ակտիվորեն գործելով իրականացնում է այն: Կնշանակի՝ ակտիվ բանվոր դասակարգի կազմակերպութիւնները վորոշակի բազիսի հի-

1) Մարքս և Ենգելս, III հ., էջ 102:

ման վրա հանդիսանում են ամենագլխավորը ժամանակակից հասարակութեան ձեւափոխութեան համար:

Անգլիական բուրժուազիան շատ լավ հասկանալով, թե ինչ կարող է անել պրոլետարիատը, յեթե նրա գիտակցութեան մեջ արդեն թափանցել է հեղափոխական միտքը, յեթե նրան տանում են ճիշտ ճանապարհով, կազմակերպում են հեղափոխական մարքսիզմի մարտական լողունգները շուրջը, փորձում է իր վարակով վարակել անգլիական բանվորներին: «Ինձ թվում է... վոր Զոնսոնի նոր քայլն, իրականում բացատրվում է նրանով, վոր անգլիական պրոլետարիատը փաստորեն ավելի ու ավելի յե բուրժուականանում, աչնպես վոր բոլոր աղղերի մեջ առավել բուրժուական այս աղղն, ըստ յերկվոյթին, ուզում է, վոր վերջիվերջո բուրժուազիայի հետ միասին ունենա բուրժուական արխատկրատիա և բուրժուական պրոլետարիատ»:<sup>1)</sup> Խնդիրն այն է, վոր կարողանանք յուրաքանչյուր բանվորի դուրս պոկել բուրժուական իդեոլոգիայի ճնշումից, ներգրավել նրան կապիտալիզմի դեմ հեղափոխական ակտիվ պայքար մղելու մեջ: Հարկավոր է բանվորների մեջ բարձրացնել ինքնագնութեան գիտակցութիւնը, պիտութիւնից ոգնութիւնն սպասելու փոխարեն հարկավոր է նրանց բացատրել, վոր միայն իրենք կարող են իրենց ոգնի յերենց ինքնուրույն գործողութիւններով՝ ընդդեմ կեղեքիչների: Յեթե Խիսմարկն արտակարգ որենք հրատարակեց սոցիալիստների դեմ, ապա վերջիններս չպետք է զենքերը ցած դնեն: Ընդհակառակը, նրանք պարտավոր են ակտիվ պայքար մղել նրանց դեմ: Խիսմարկը «զոհ կարող է դառնալ այն ունակցիային, վոր նա մտցրել է իր որենքով՝ սոցիալիստների դեմ»:<sup>2)</sup> Այսպիսի յեղք «անկարելի չէ», միայն պետք է իրականացնել այն: Գիտական կոմունիզմի հաջողութիւնները կախված են այն բանից, թե վո՞ր չափով կկարողանանք «բանվորներին... գլուխներն ազատել ուստպիական սոցիալիզմից և ֆանտաստիկ պատկերացումներից հասարակութեան ապագա կառուցվածքի վերաբերյալ»:

1) Մարքս և Ենգելս, XXII հ., էջ 360:

2) » » XXIV հ., էջ 316:

Տասնամյակները ընթացքում մենք մեծ դժվարություններ չանուամ ենք այս անել «գերմանական բանվորների համար», սակայն, դժբախտաբար, վերջին ժամանակներս «ուսուպիական սոցիալիզմը կրկին տիրել է նրանց մըտքերին միայն այն տարբերություններով, վոր նա ավելի ցածր հարգելի է և ընդհանուր վոչինչ չունի ֆրանսիական ու անգլիական մեծ ուսուպիստների ուսմունքի հետ, այլ նրան ստեղծել է Վլայտլինգը: Բնական է, վոր մատերիալիստական—քննադատական սոցիալիզմին նախորդած ուսուպիզմն իր մեջ կրում է առաջինը սաղմնային վիճակում (innucs), իսկ ժամանակիցն ուշ (post festum) հրապարակ դուրս գալով, նա կլինի միայն անհեթեթ, սաղտուկ և իր բուն հիմքում՝ «եակցիոն»<sup>1)</sup> Բանվորական շարժման մեջ յեղած այս «եակցիոն յերևույթի, ոպորտունիզմի դեմ պայքարել, նշանակում է պատերազմ հայտարարել սոցիալիստական շարժման այսպես կոչված պաշտոնական «առաջնորդներին», նշանակում է հենված մասսաների վրա՝ դնալ նրանց դեմ, մերկացնել վերջիններիս գործողությունները, ցույց տալ աշխատավորներին իրենց ազատագրման իսկական ուղին: Պաշտոնական «առաջնորդներն» արգելակում են և շարունակում են արգելակել շարժումը, նրանք փաստորեն հանդիսանում են բուրժուական ու մանր-բուրժուական գաղափարների կրողները պրոլետարական մասսաների մեջ, ուստի վերջիններս «պետք է ամենից առաջ ազատվեն իրենց ներկայիս առաջնորդներից»<sup>2)</sup>, «Գերմանական Եարժուսն այն առանձնահատկությունն ունի, վոր առաջնորդների բոլոր սխալները մշտապես նորից ուղղում են մասսաները...»<sup>3)</sup> Ենդելսը սա համարում է դրական յերևույթ, վորչպիով վոր սա վկայում է «ներքնախավերի» հասունություն մասին: Հիմնական խնդիրն է՝ բարձրացնել միլիոնների ինքնագիտակցությունը, վերջիններիս պայքարն ուղղել ձիշտ հունով, գործնապես համոզել նրանց մեր թեորիական սկզբունքների ճշտություն վերաբերմամբ: Միանգամայն չպետք է վախենալ այն բանից, վոր այսպիսի աշխատանքի արդյունքը կլինի բանվորական շարժման պառակտումը, վորովհետև սրանից

1) Նամակներ՝ Ագորացիու խմբ., էջ 255—256:  
 2) » » » էջ 251:  
 3) » » » էջ 245:»

միայն ոգուտ կա և վոչ թե մլասա: «Իմ կարծիքով մենք հաղիվ թե շատ բան կորցնենք յեթե ձեր պաշտոնական սոցիալիստները նաջիտնալիստների կողմն անցնեն: Իսկ յեթե այս դեպքում քայքայվի նաև գերմանական ամբողջ S. A. P.—ն, սոցիալիստական բանվորական կուսակցությունը, ապա մենք սրանից կշահենք: Ավանդ, չե՞ վոր այդքան մեզ չի հաջողվի: Շարժման առողջ տարրերը վերջիվերջո կրկին կհանդիպեն միմյանց, և սա տեղի կունենա այնքան ավելի շուտ, վորքան ամեն մի աղբը կհեռանա»<sup>1)</sup> Սա չի նշանակում, թե Ենդելսը բացասում էր իր առաջին թեզիսը, բանվորական շարժման միասնություն վերաբերյալ, արգի պրոլետարիատի հեղափոխական ուժերի միավորման վերաբերյալ: Ընդհակառակը, պնդելով, վոր բոլոր ոպորտունիստները վտարվեն կուսակցությունից, Ենդելսը սրա հետ միասին պահանջում էր համախմբել բուրժուական հասարակություն բոլոր առաջավոր ուժերը, պրոպագանդ էր անում հոգուտ միասնական ճակատի, բայց միայն մարքսիզմի հեղափոխական թեորիայի հիման վրա: Պրոլետարիատը չի կարող հաղթել յեթե վոչ միայն իդեոլոգիապես, այլև կազմակերպորեն իր հաշիվները չմաքրի ոպորտունիստական տարրերի հետ: Ուստի մեզ հարկավոր է միասնական ճակատ վոչ թե ձևականորեն, այլ ըստ էյուլթյան, վորովհետև կարծել, թե աշխարհը կարելի է վերափոխել չունենալով գործողություններ միասնություն, բացասել շարժման հեղափոխական սկզբունքների և միասնական ծրագրի անհրաժեշտությունը, նշանակում է ինքնախաբեյությունը դրաղվել և դրանով իսկ գիտակցաբար մլասել գիտական կոմունիզմի գործին: Գիտական կոմունիզմ նշանակում է հասարակական արագրություն ու սպառման բուրժուական կազմակերպություն սկզբունքային բացասում, իսկ մարքսիզմը գիտական կոմունիզմի թեորիան է, ուստի հեղափոխական պայքարի միասնություն վորեև այլ թեորիայի հիման վրա վոչ միայն անընդունելի է, այլև ուղղակի մլասակար պրոլետարիատի համար: «Կոմունիստները, ձգտելով պրոլետարիատի ղեկավարություն միավորել աշխատավոր դյուղացություն, քաղաքային մանր-բուրժուականի և կեղեքված աղբուրություն»

1) Նամակներ՝ Ագորացիու խմբ. էջ 272:

ների պայքարը, պետք է ձգտեն ստեղծել լայն հակաֆաշիստական ժողովրդական հակա՝ պրոլետարական միասնական ճակատի բազայի վրա, հանդես գալով աշխատավորների այս խավերի բոլոր առանձնահատուկ պահանջների համար, վորոնք համընթաց են պրոլետարիատի արմատական շահերին» (Կոմիտեերնի VII կոնգրեսի բանաձևից), այլ կերպ ասած վորոնք ընթանում են մարքսիզմի նշած ուղիով: Ահա, թե ինչ էլին սովորեցնում Մարքսն ու Ենգելսը բանվոր դասակարգին, ահա, թե ինչպես նրանք բարձրացրին նրա ինքնագիտակցութունը և ինչ ուղղությամբ էլին տանում բանվորներին և տանում է այժմ Կոմունիստական Ինտերնացիոնալը:

Արատարակտ յեղակիից դեպի համընդհանուրը, իսկ վերջինից դեպի այս համընդհանուրը կոնկրետ ձևավերը: Այսպես է վոչ միայն իմացության ուղին առհասարակ կամ գիտական իմացության ուղին այս բառի նեղ իմաստով, այլև պրոլետարիատի ինքնագիտակցության պրոցեսը: Ընդվորում կարևոր է ընդգծել, վոր միայն գիտակցության վերջին փուլում է սկսում իսկական մտածութունը, վորչափով վոր միայն նրան հասնելով է մարդկային միտքը լիակատար հնարավորություն ստանում թափանցելու հասարակության ու ընտելյան ներքին որինաչափությունների մեջ, ցույց տալ վերջիններիս փոխիտության սենդեցն ու կոնկրետ ձևերը: Յերբ գիտակցությունը դեռևս կանգնած է աբստրակտ յեղակիի տեսակետի վրա, նա նկարագրական գիտակցություն է, վորովհետև զբաղվում է փաստերի նկարագրությամբ կամ հավաստումով միայն: Բանվորական շարժման մեջ ինքնագիտակցության այս աստիճանը համապատասխանում է կապիտալիզմի դեմ պրոլետարիատի մղած պայքարի տարերայնության, անկազմակերպվածության շրջանին: Սակայն, մարդկային միտքը յերբեք չի քարանուծ միևնույն կետում, վորչափով վոր նա հավիտենապես շարժվող որյեկտի անդրադարձումն է: Բազմապատիկ նկարագրությունը, առադրությունը, համեմատությունը և այլն անխուսափելիորեն հանգում են ընդհանրացումների, ճիշտ այնպես, ինչպես պրոլետարների առանձին անկազմակերպ յերլոյթներից առաջանում են համապատասխան բանվորական կազմակերպություններ:

Բայց սրանով հաղթահարվում, վտարվում է արդյոք հին, հետամնաց գիտակցությունը կամ տարերայնությունը բանվորական շարժումից առհասարակ: Արդյոք բանվոր դասակարգը կարող է միայն իր սեփական ուժերով բարձրանալ մինչև այդ, մինչև գիտական սոցիալիզմի աստիճանը: Լենինն ասում է. «Բոլոր յերկրների պատմությունը վկայում է, վոր բանվոր դասակարգը բացառապես իր սեփական ուժերով ի վիճակի յե հասնելու միայն տրեղ-յունիոնիստների գիտակցության, այսինքն՝ այն համոզման, վոր անհրաժեշտ է միավորվել միությունների մեջ, պաշար մղել ձեռնարկատերերի դեմ, հասնել այն բանին, վոր կառավարությունը հրատարակի բանվորների համար անհրաժեշտ այս կամ այն որենքները և այլն: Տրեղ — յունիոնիզմը — դա հարցի լուծումը չէ, դա բանվոր դասակարգի իղեպալը չէ, վորչափով վոր նրա վրա հենված նմ յերբեք չի հասնի իսկական դասակարգային քաղաքական գիտակցության, հետևաբար յերբեք չի կարող հաղթանակել և վերջ դնել ամեն մի շահագործման: «Դասակարգային քաղաքական գիտակցությունը բանվորի համար կարող է բերվել միայն դրսից, այսինքն անտեսական պայքարից դուրս, բանվորների ու ձեռնարկատերերի հարաբերությունների վորտեղից դուրս: Այն ասպարեզը, միայն վորից կարելի յե քաղել այս գիտելությունը, դա բոլոր դասակարգերի ու խավերի հարաբերության ասպարեզն է դեպի պետությունն ու կառավարությունը, բայց դասակարգերի փոխհարաբերությունների ասպարեզը: Այս պատճառով այն հարցին, թե ինչ անել բանվորներին քաղաքական գիտելության բերելու համար, չի կարելի տալ միայն այն պատասխանը, վորով մեծ մասամբ բավականանում են պրակտիկները, չխոսելով արդեն այն պրակտիկների մասին, վորոնք հակամետ են դեպի եկոնոմիզմը, այն է՝ «գնալ բանվորների մոտ» պատասխանը: Բանվորներին քաղաքական գիտելության բերելու համար սոցիալ — դեմոկրատները պետք է գնան բնակչության բոլոր դասակարգերի մեջ, պետք է բոլոր յերկրների մեջ ցրեն իրենց բանակի ջոկատները»:

Մարքսն ու Ենգելսը կանգնեցին քաղաքական գիտական գործունեյության հենց այս ուղու վրա, նրանք կարողա-

1) Լենին, Կ. IV. Եջ 422: Ընդժ. հեղինակինն է.

ցան հաղթահարել արեղ-յունիոնիստական ցեխայնությունը, բան-  
վոր դասակարգը դուրս բերին գործողությունների ավելի լայն  
ճանապարհ, քաղաքական պայքարի ճանապարհ այս բառի  
լիակատար իմաստով: Յնթե Մարքսն ու Ենգելսը դարձյալ  
շարունակեցին բարձրացնել բանվորների հարաբերության  
հարցը միայն՝ տնտեսատեսերի հետ, կամ դուռ տնտեսական  
հարցեր, նրանք յերբեք գիտական կոմունիզմի հիմնադիրները  
չեղին դառնա: Կոմունիզմն անհամատեղելի յե բուրժուական  
հասարակության դասակարգերի ու բուրժուական պետու-  
թյունների հետ: Բայց կապիտալիստները դասակարգը և առ-  
հասարակ շահագործողներին վոչնչացնելու և պետության մա-  
հացման պայմաններն ստեղծելու համար հարկավոր ե ունե-  
նալ պրոլետարիատի դիկտատուրա, այսինքն՝ դասակարգերի  
վորոշ հարաբերակցություն, պրոլետարիատի և աշխատավոր  
գյուղացուցության վորոշակի դաշինք, բուրժուազիայի դիմադ-  
րության ակտիվ ջակջախում: Ուստի քաղաքական գիտակ-  
ցությունը հանդիսանում ե դասակարգերի փոխհարաբերության,  
նրանց պայքարի և հաղթության ուղիների գիտելությունն  
այս որինակ պայքարում: Այս բոլորի իրականացման համար  
չի կարելի «գնալ» միայն «բանվորների մոտ» կամ «իր ուժերը  
չցրել բոլոր յերկրները», դա կլինի հրաժարում քաղաքական  
պայքարից, վորից դուրս անկարելի յե վորեւ քաղաքական  
գիտակցություն: Տակավին «Կոմունիստական Մանիֆեստում»  
Մարքսն ու Ենգելսը հանձարեղ կերպով նկարագրել են պրո-  
լետարիատի ինքնագիտակցության ուղին, վորին (ինքնագիտակ-  
ցությանը) նա հասել ե պայքարելով արդի հասարակության  
բուրժուական և այլ ուսակցիոն դասակարգերի դեմ, այլ կերպ  
ասած՝ դեռևս այստեղ գիտական կոմունիզմի հիմնադիրներն  
ապացուցել են այն թեզիսի ճշտությունը, թե քաղաքական  
գիտակցությունն ինքն իրենից, նեղ ցեխայնության սահման-  
ներից դուրս գալու և «քնակչության բոլոր դասակարգերի  
մեջ» գնալու ճշտում ե: Կոմունիստները,—գրում են նրանք  
հիշյալ աշխատության մեջ,—ամենուրեք պաշտպանում են հեղա-  
փոխական տարրերին ընդդեմ ուսակցիոններն և բուրժուա-  
զիայի պահպանողական մասի, ընդդեմ բոլոր նրանց, ովքեր

խոչընդոտ են հանդիսանում պրոլետարիան և սոցիալիստական  
հեղափոխություն պատրաստելու գործին: Յելնելով հենց այս  
դրույթից, Կոմիտեերնի VII կոնգրեսը հայտարարեց, վոր  
«Միասնական ճակատի գործնական իրականացումը կոմունիստ-  
ներից պահանջում ե հաղթահարել սեկսանսուքյուցն իր սեփա-  
կան շարքերում», իհարկե, յերբեք չմոռանալով և չթուլաց-  
նելով պայքարն աջ թեքման դեմ: Մարքսն ու Ենգել-  
սը «Կոմունիստական Մանիֆեստում» այս հարցի առթիվ  
ավել են միայն ընդհանուր սկզբունքները, այս փոխհարաբե-  
րության հիմնական յեղրագծերը, իսկ հետագա խնդիրն եր ել  
ավելի կոնկրետացնել այս ուղեցույց ցուցումները:

Ընդհանրացնելով 1848 թվի փորձը, Մարքսն արդեն  
ընդհանուրից անցնում ե ավելի կոնկրետ հարցերի և պրոլե-  
տարիատի վերաբերմունքի ավելի ճշգրիտ վորոշումներին դեպի  
քնակչության զանազան դասակարգերը հեղափոխության զար-  
գացման տարբեր աստիճանների վրա, սրանով իսկ բանվոր  
դասակարգի ինքնագիտակցությունը բարձրացնելով մի նոր,  
ավելի բարձր աստիճանի:

1848 թ. փետրվարյան որերի պրակտիկան ցույց տվեց,  
վոր պրոլետարիատը վորոշակի ժամանակամիջոցում՝ կարող  
ե «պաշտպանել իր շահերը՝ բուրժուական շահերի հետ կողք  
կողքի» և բուրժուազիայի հետ միատեղ պայքար մղել ուսակցիայի  
դեմ: Սակայն, միայն վորոշակի շրջանում՝ ֆեոդալական  
ուսակցիայի և խոշոր բանկիրների տիրապետության տապալման  
համար մղվող կռիվի շրջանում: Բայց հենց վոր հիմնականում  
լուծվեց այս խնդիրը, բուրժուական ուղիկալներն իրենց պա-  
հանջները համարեցին բավարարված, նոր դեմոկրատական հան-  
րապետությունն ել իր դեմքը դարձրեց իր նախկին դաշնակից  
պրոլետարիատի դեմ: Յնվ Մարքսն այդ բացատրում ե այսպես.  
Չե վոր իշխանությանը տիրանալուց հետո հարկավոր եր  
ամբացնել այն, «հարկավոր եր վերականգնել հասարակության  
վարկային վստահությունը, վոր ամենևին համատեղելի չեր  
բանվորների ազատագրման լողունգի հետ»: «Բանվորների  
ազատագրումը»—նույնիսկ հենց այս խոսքը վտանգավոր  
դարձավ նոր հանրապետության համար, վորովհետև դա մըշ-

տական խոչընդոտ եր վարկի վերականգնման համար, վորը խարսխված է գոյութուն ունեցող դասակարգային հարաբերութիւնները հաստատապես ու անխախտորեն ընդունելու վրա»<sup>1)</sup> Այստեղից յեզրակացութիւն, վոր մինչև իսկ միատեղ պայքարի շրջանումն ել չի կարելի և վոչ մի բողոք դադարել «բանվորների մտքերի մեջ առաջացնելու հնարավորութեան չափ ավելի պարզ գիտակցութիւն բուրժուազիայի և պրոլետարիատի շահերի թշնամական հակադրութեան վերաբերմամբ»<sup>2)</sup> չի կարելի պրոլետարիատի շահերի պաշտպանութիւնը վստահել բուրժուազիային, հետևաբար և, չի կարելի հրաժարվել բանվորական շարժման ինքնուրույնութիւնը պահպանելուց, ջանալ տիրապետելու բոլոր աշխատավորական մասսաներին և նրանց ներգրավելու բուրժուազիայի դեմ ակտիվ պայքար մղելու մեջ... Ոպորտունիստական տարրերն ինչպես այն ժամանակ, այնպես ել այժմ կարող են ասել, թե այս հնարավոր չէ: Բայց վոչ: 1848 թ. հեղափոխութեան փորձը ցույց տվեց, վոր «յերբ պրոլետարիատը ժամանակավորապես հեռացավ ասպարեղից և պաշտոնապես հռչակվեց բուրժուազիայի դիկտատուրան, միջին խավերը մասսայորեն պետք է ավելի ու ավելի սերտորեն հարեյին պրոլետարիատին, վորչափով վոր վատթարանում եր նրանց դրութիւնը և սրվում հակամարտութիւնը նրանց և բուրժուազիայի միջև: Յեթե առաջ նրանք իրենց թշնամութեան պատճառը տեսնում էյին պրոլետարիատի ուժեղացման մեջ, ապա այժմ նրանք այդ պետք է տեսնելին նրա պարտութեան մեջ»<sup>3)</sup> Հետևաբար, բոլոր պայմանները կան այս մասսային տիրանալու համար, նրան պրոլետարիատի կողմը գրավելու համար: Չի կարելի ասել, թե մանր յերկրագործների շահերն ու բանվորների շահերը մտապես սկզբունքներն բացասում են միմյանց: Ընդհակառակը, կապիտալիզմի զարգացման վորոշակի աստիճանի վրա բուրժուազիայի ու մանր հողատերերի հակասութիւնն այնքան է ուժեղանում,

1) Մարքս, «Գասակարգային պայքարը Ֆրանսիայում», 1930 թ. ռուս. հրատ. էջ 41:  
2) Մարքս և Ենգելս, V հ. էջ 512:  
3) Մարքս, «Գասակարգային պայքարը Ֆրանսիայում», նույն հրատ., էջ 50:

վոր վերջիններս համար ել կապիտալիզմը դառնում է միանգամայն անտանելի: Չէ վոր փաստ է, վոր կապիտալիզմի ժամանակ աշխատավոր գյուղացիները «մեծ մասամբ այնպես են ծանրաբեռնված հիպոթեկով (կաքերի գրավադրումով:—Հ.), վոր գտնվում են նույնպիսի կախման մեջ վաշխառուներից, ինչպիսի կախման մեջ են վարձակալողները հողատերերից: Նրանց մոտ ել մնում է միայն շատ աղքատիկ և բացի գրանից, բերքատվութեան տատանումների հետևանքով անստույգ վաստակ: Նրանք ամենից քիչ կարող են վորեւ հույս դնել բուրժուազիայի վրա, վորովհետև նրանց շահագործում են հենց բուրժուաները՝ վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները: Սակայն նրանք մեծ մասամբ շատ են կապված իրենց սեփականութեանը, թեև իրականում դրանք պատկանում են վոչ թե իրենց, այլ վաշխառուին: Այնուամենայնիվ, կարելի է համոզվել նրանում, վոր նրանք այն ժամանակ միայն կարող են ազատվել վաշխառուից, յերբ ժողովրդից կախված կառավարութիւնը բոլոր հիպոթեկային պարտքերը կվերածի մի միասնական պարտքի պետութեան հանդեպ և այս ճանապարհով կլիջեցնի տոկոսը: Իսկ այս բանը կարող է իրականացնել բանվոր դասակարգը»<sup>1)</sup> Հետևաբար, աշխատավոր գյուղացիութեան ազատագրումը հնարավոր է միայն պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ: Սա արդեն անվիճելի փաստ է, վորչափով վոր պրակտիկան ամեն որ նորանոր հակասութիւններ է հայտարարում բուրժուազիայի ու գյուղացութեան միջև կապիտալիստական յերկրներում: Խնդիրն այն է, վոր այս փաստն ընդհանուր սեփականութիւն դառնա վոչ միայն բոլոր գյուղացիների համար, այլև բանվորների, վոր չափով վոր վերջիններս ել միշտ չէ, վոր պարզ լպատկերացնում են իրենց դաշնակցի դերը կապիտալիզմի դեմ պայքարելիս: Որինակ, Փարիզի պրոլետարիատն իր դիկտատուրան հաստատելիս չկարողացավ բավականաչափ դնահատել գյուղացութեան դերը հակահեղափոխական վերսալի դեմ պայքարելիս, վորպիսի հանգամանքը պակաս կարևոր նշանակութիւն չունեցավ Կոմունայի պարտութեան գործում: Կոմունիզմը,

1) Ֆ. Ենգելս, Գյուղացիական հարցը Գերմանիայում, 1926 թ. ռուս. հրատ. էջ 20:

անտարակույս, պահանջում ե վերացնել մասնավոր սեփական-  
նությունը, նա անհամատեղելի յե դրա հետ, բայց այս սկզբ-  
բունքն իրագործելու համար պրոլետարիատը չի կարող միա-  
տեսակ վերաբերվել ինչպես խոշոր սեփականատերերին, այն-  
պես ել մանր գյուղացիներին: Կապիտալիստների և խոշոր  
հողատերերի սեփականության եքսպրոպրիացիան, նրանց  
վոչնչացումն իբրև դասակարգի, հանդիսանում ե սոցիալիստա-  
կան հեղափոխության հիմնական հարցը, իսկ աշխատավոր  
գյուղացության վերաբերմամբ նա վարվում ե այլ կերպ,  
առաջադրում ե դաստիարակության, գյուղացիական մասսաներն  
աստիճանաբար վերափոխելու պրոբլեմը: Քաղաքական պայ-  
քարում հաղթանակելով, պրոլետարիատը պարտավոր ե ոգնել  
գյուղացիներին, ոգնել գործնապես, կոնկրետ, ոգնել նրա  
համար, վորպեսզի նրանց դուրս բերի այն դրությունից,  
վորի մեջ նրանք գտնվում են կապիտալիզմի տիրապետու-  
թյան հետևանքով, պայմաններ ստեղծել գյուղատնտեսության  
սոցիալիստական վերակազմության համար, սովորեցնում են  
մեզ Մարքսն ու Ենգելսը:

Իսկ չէ՞ վոր կոմունիզմի վերջնական լիակատար հաղթա-  
նակը, պրոլետարիատի նոր թագավորության ստեղծում  
չե, այլ ամեն մի թագավորության վախճան, հետևա-  
բար, բանվոր դասակարգը, նվաճելով քաղաքական իշխա-  
նությունը,՝ վոչ միայն պարտավոր ե վոչնչացնել շահա-  
գործողներին, այլև պայմաններ ստեղծել կամ հիմունք-  
ներ աշխատավորական դասակարգի մահացման համար, այ-  
սինքն՝ նա պարտավոր ե մնացած յերկրներում նույնպես անել  
այն, ինչ արել ե և շարունակում ե անել մեզ մոտ: Այսպիսով,  
պրոլետարիատին սովորեցնել ինքնագիտակցություն և ինքնա-  
ճանաչում, նշանակում ե ստեղծել մի ամբողջ գիտություն՝  
արդի հասարակության դասակարգային հարաբերությունների  
մասին, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթության ուղիներ-  
ի ու պայմանների մասին և, բանվորներին հասցնելով ժամա-  
նակակից գիտության մակարդակին, սրանով իսկ հեղաշրջում  
առաջացնել ինչպես աշխատավոր մարդկության հասարակու-  
թյան—քաղաքական գիտակցության, այնպես ել գիտու-  
թյան ու գիտական մտքի մեջ առհասարակ: Ահա Մարքսի ու  
Ենգելսի առաջին հիմնական ծառայությունը:

II

Մարքսի մահվանից ավելի քան մի քառորդ դար հետո  
անդրադառնալով բանվոր դասակարգի առաջին ուսուցիչներին  
մեծագույն ծառայություններին, Լենինը գրում եր, վոր  
«Մարքսի վողջ հանճարեղությունն այն եր, վոր նա պատաս-  
խան տվեց այն հարցին, վոր արդեն դրել եր մարդկության  
առաջավոր միտքը»:<sup>1)</sup> Ինչպես հայտնի յե գիտության և իմա-  
ցաբանության բնագավառում (քաղաքական պայքարի մա-  
սին մենք արդեն խոսեցինք) առաջին հարցը արտաքին աշ-  
խարհի գոյության պրոբլեմն եր, այլ կերպ ասած՝ իմացության  
որյեկտի ռեալ լինելու պրոբլեմը:

Արդյոք նյութական աշխարհը գոյություն ունի՞ սուբյեկտից և  
սուբյեկտիվ իմացությունից դուրս առհասարակ թե՞ նա մարդկային  
մտածության արդյունք ե: Ահա ամեն մի փիլիսոփայության,  
հետևաբար նաև մարքսիստական փիլիսոփայության հիմնական  
հարցը: Կարծել, թե մինչև Մարքսն ու Ենգելսը Ֆրանսիական  
մատերիալիստները, իսկ հետո Յոյերբախն արդեն վերջնակա-  
նապես լուծեցին այս հարցը, միանգամայն սխալ կլիներ: Մա-  
տերիալիզմը լիակատար չափով կարող ե հաղթանակել միայն  
այն ժամանակ, յերբ հանդես ե գալիս իբրև միևնույն վերջ հետևողա-  
կան հեղափոխական դասակարգի աշխարհայացք, յերբ նա կրոնի  
ու կրոնական աշխարհըմբռնման դեմ պայքարելիս և վոչ մի  
քայլ չի նահանջի իր սկզբունքային դիրքերից: Չի կարելի  
ապացուցել, վոր բուրժուազիան յերբևե մինչև վերջը հետևողա-  
կան հեղափոխական դասակարգ ե յեղել, կամ թե նրա փիլի-  
սոփայությունը՝ մեխանիկական մատերիալիզմը վերջնակա-  
նապես հաղթահարել ե իդեալիզմը մարդկային մտածության  
բոլոր մարդերից: Ընդհակառակը՝ Ֆեոդալիզմի դեմ պայքարելիս  
բուրժուազիան ձգտում եր հավերժացնել իր տիրապետությունը

1) Լենին, XVI հ. էջ 349:

այսինքն՝ հաստատել շահագործման նոր, ավելի նուրբ ձև, հետևաբար նաև փելիսոփայական թեորիական հարցերում չեն կարող դուրս գալ մասնավոր սեփականատիրական հարաբերությունները կախարդական շրջագծից: Նույնիսկ այն ժամանակ, չեն նրա առաջավոր մտածողներն ընդունում եյին արտաքին աշխարհն իբրև իրականություն, «առաջիկան», իրականությունը, զգայականությունը դիտում եյին միայն որչեփ կամ հայեցողքում ձևով, և վոչ թե իբրև զգայական—մառդկային գործունեություն, վոչ քե գործնականի ձևով, վոչ թե սուբյեկտիվորեն: Ուստի գործուն կողմը, ի հակադիմապես լիզմին, զարգացնում եր իրեալիզմը, բայց միայն արատրակտ կերպով, վորովհետև վերջինս բնականաբար չգիտե իրական, զգայական գործունեությունն իբրև այդպիսին»: 1) Կնշանակի, Մարքսի ու Ենգելսի որչեփ ըմբռնումը չի կարելի նույնացնել մինչև իսկ Ֆրանսիական մատերիալիստների ըմբռնած որչեփ հետ: Յեթե Դիլդորֆի և նույնիսկ Ֆոյերբախի համար որչեփ անփոփոխ վոչ գործուն, հայեցողական որչեփ ե, Մարքսի ու Ենգելսի համար նա պատմական պրոցեսի արդյունք ե և գտնվում ե մշտական և անընդհատ լինելիության մեջ: Մեխանիկական մատերիալիզմը, շարժումը համարելով մատերիալիստիբուտը, չհասավ մինչև իմացություն որչեփ պատմական ծագման ճանաչմանը: Նա ընդունեց աշխարհի շարժականությունը, իսկասենք հասարակություն իսկական պատմության ստեղծում հնարավոր դարձավ միայն մարքսիզմի հաղթանակից հետո: Իհարկե, մինչև Մարքսն ու Ենգելսը Հեգելը ջանում եր ստեղծել «վոգու» պատմություն, բայց նրա փորձերը չպսակվեցին հաջողությամբ և չեյին կարող պսակվել, վորչափով վոր նրա «վոգին» կարված եր իրականությունից, յերևակայական, վոչ ուսել վոգի չեր: Առաջին անգամ Մարքսն ու Ենգելսն ապացուցեցին, վոր գոյություն ունի «միայն մի միակ դիտություն, պատմագիտություն: Պատմությունը կարելի չի դիտել չերկու կողմից և բաժանել՝ բնության պատմության և մարդկանց պատմության: Բայց այս յերկու կողմերը չի կարելի բաժանել միմյան-

1) Մարքս և Ենգելս—Արխիվ, I, էջ 200:

ցից: քանի դեռ գոյություն ունեն մարդիկ, բնություն պատմությունն ու մարդկանց պատմությունը պայմանավորում են միմյանց»: 2) Սա նշանակում եր, վոր Մարքսն ու Ենգելսը վերջնականապես մերժեցին որչեփ վոչ պատմական և վոչ նյութական լինելու թեղիսը: Գիտությունը պատմություն ե, բնության ու հասարակության ծագման ու փոփոխությունների պատմություն, մատերիալի գոյություն զանազան ձևերի պատմություն, շարժման զանազան ձևերի պատմություն, և այլն: Այն մեխանիկական թեղիսը, թե կա միայն քանակական փոփոխություն, ավելացում ու պակասում և վոչ թե նորի ծնում, նրա վորակական փոփոխություն, անցում մի նորի, մի խոսքով պատմություն, սխալ ե: Հետևաբար, որչեփ մի մեռած, արատրակտ, անվորակ գործ մատերիալ չե, այլ վորակապես բազմազան ե: Այն հանգամանքը վոր Բեկոնից հետո «ժպտացող մատերիալիզմ» աստիճանաբար դարձավ «միակողմանի», «զգայականությունը կորցրեց իր վառվոտն գույները և վերածվեց չերկրաչափի արատրակտ զգայականություն»: 3) Մարքսն ամենևին դրական չհամարեց, վորովհետև դրանով նա պաշտպանած կլինե մեխանիկական մատերիալիզմի կողմից որչեփ մեխանիկական պատկերացման թեորիան: Իրականում պատմականորեն զարգացող որչեփ անվերջանալիորեն բազմազան ե, վորովհետև այն, ինչ մենք անվանում ենք մատերիա կամ շարժում իբրև այդպիսին հանդիսանում ե «կրճատումներ, վորոնց մեջ մենք, նրանց ընդհանուր հատկությունների համաձայն անփոփոխ ենք գտնազան զգացականորեն ընկալելի իրեր»: 3) Իրերի այս տարբերությունը գոյություն ունի որչեփ կերպով և նյութը պատմական շարժման պրոցեսում դրսևորվում ե նոր տարբերություններով, առաջանում են նոր տարբերություններ, ավելի շուտ որչեփ գոյության նոր ձևեր: Կնշանակի, որչեփ Մարքսի ու Ենգելսի ըմբռնումով պատմական ե վոչ միայն այն մտքով, վոր նա անվերջանալիորեն փոփոխվում ե, զարգանում ե իրենից հետ թողնելով իր հին կացությունը,

1) Մարքս և Ենգելս, Արխիվ, I գիրք, էջ 214:

2) Մարքս և Ենգելս, Արխիվ, I գիրք, էջ 214:

3) Մարքս և Ենգելս, III հ., էջ 157:

այլև այն մտքով, վոր որչեփք հասարակական բնույթ ունի, հանդիսանում է մարդու արտադրական գործունեության արդյունքը: Տակավին «գերմանական իդեոլոգիայում» Մարքսն ու Ենգելսը մեղադրում են Ֆոյերբախին նրանում, վոր նա չի տեսել, թե ինչպես «այս գործունեությունը», այս ընդհանուր զգայական ստեղծագործությունը, այս արտադրությունն այն աստիճան հիմք է ծառայում ամբողջ զգայական աշխարհի համար, ինչպես նա այժմ գոյություն ունի, վոր չեթե դադարեր գեթ միայն մի տարով, ապա Ֆոյերբախը վոչ միայն վիթխար փոփոխություններ կգտներ ֆիզիկական աշխարհում, այլև շատ շուտով չեր գտնի ամբողջ մարդկային աշխարհը, հայեցողության սեփական ընդունակությունը և նույնիսկ իր սեփական գոյությունը<sup>1)</sup> Իսկ մի քիչ ավելի ուշ, առանձնապես «Կապիտալում» Մարքսն արդեն ավելի մանրամասն ավեց կապիտալիստական հասարակության պատմության վերլուծությունը կրկին անգամ ավելի կոնկրետ և հիմնովին հաստատելով վերոհիշյալ թեզիսի ճշտությունը: Այնպես վոր, հեղաշրջում կատարելով գիտություն մեջ, Մարքսն ու Ենգելսը չեյին կարող շարունակել որչեփք հին մեկնարանությունը: Վերջնականապես հաղթահարելով իդեալիզմը, նրանք շատ ավելի հեռու գնացին, քան մեխանիկական մատերիալիզմը, այս թվում նաև Ֆոյերբախը, «հաշվի առնելով քիմիայի ու բիոլոգիայի նորագույն զարգացումը (իսկ մեր որերին հարկավոր եր ավելացնել նաև մատերիալի ելկտրականության թեորիան»,<sup>2)</sup> կանգնեցին դիալեկտիկական մատերիալիզմի ուղու վրա, ստեղծեցին նոր գիտություն:

Մատերիալիստական դիալեկտիկական ուսմունք է կեցություն ու մտածողության շարժման ընդհանուր որենքների մասին: Այն հին պատկերացումը, թե որչեփք գոյություն ունի սոսկ հայեցողության մեջ, վոր նա իր ընտելությամբ պասսիվ է, փոխարինվեց նրա իբրև պրակտիկայի, «սուբյեկտի» ըմբռնումով: Ուստի որչեփք հետ միասին սուբյեկտն էլ հեղափոխական

1) Մարքս և Ենգելս, XI V հ, էջ 355:

2) Լենին, XX VIII հ, էջ 10:

պրոլետարիատի փիլիսոփայության մեջ այլ կերպ է դրվում, միանգամայն այլ կերպ մեկնաբանվում և իր նախկին կացությունը հակառակ նոր ընտելթ է ընդունում: Սուբյեկտի նախկին կամ մեխանիստական պատկերացումը նրա նույնացումն էր բիոլոգիական եյություն հետ, այն բանի հետ, վոր նա ընտելության մի մասն է, բաց միայն գիտակցությունը ոժտված: Մինչև Մարքսը մատերիալիզմը չկարողացավ բնական բիոլոգիական եյություն ճանաչումից բարձրանալ մինչև այն բանի ըմբռնումը, թե ինչպես հասարակությունից արտադրվող սուբյեկտը միաժամանակ արտադրում է այդ հասարակությունը, հանդիսանում է գործուն, ստեղծարար սուբյեկտ: Ուստի յերբ բանը հասավ իսկական սուբյեկտի՝ մարդու իսկական նախաձեռն, իբրև հասարակական եակի, նրա գործունեությունը, բոլոր մատերիալիստները մինչև Մարքսը դարգացնում էյին ամենազոր իդեալիզմ:

Այս հարցում գերմանական կլասիկ իդեալիզմի առավելությունն այն յեղով, վոր սուբյեկտի պրոբլեմը նա դրեց ամբողջ խստությունը և զբաղվեց սուբյեկտի ստեղծարար գործունեություն համակողմանի (վորչափով վոր այս հնարավոր է, կանգնած լինելով իդեալիզմի տեսակետի վրա) ուսումնասիրությունը: Մտածող սուբյեկտը դարձավ Կանտի փիլիսոփայության կենտրոնական առանցքը: Արտաքին աշխարհի գոյությունը, նրա որինաչափությունը, փոփոխությունները և այլն կախման մեջ դնելով մարդու գոյությունից, իբրև թե մարդուն ներհատուկ a priori կատեգորիաներից, Կանտը դրանով փաստորեն սուբյեկտին անջատեց որչեփք, առաջինը հայտարարեց ամեն ինչ, իսկ յերկրորդը՝ վոչինչ: Ֆիխտեն շատ ավելի հեռու գնաց, քան Կանտը, վերջնականապես ոճիքն ազատելով արտաքին աշխարհից և սուբյեկտից դուրս՝ նրա գոյությունից: Բաց դրա փոխարեն Ֆիխտեյի սուբյեկտը գործուն, ստեղծարար անձնավորություն է, չնայած վոր գոյություն ունի ինքնին, նա ինքն է իր գոյության պատճառը, հետևաբար ռեալ հող չունի իր վոտքերի տակ: Հեգելը ջանաց «շտկել» Ֆիխտեյի այս «սխալը», հիմք ստեղծել գործող սուբ-

յեկտի համար՝ հաստատելով սուբյեկտ-որյեկտի միասնություն: Սակայն այս միասնությունն էլ չորսնեց գործին թեկուզ այն պատճառով, վոր այն ստեղծվեց իդեալիստական հիման վրա, վորի հետեանքով Հեգելի մոտ վերջին հաշիվով որյեկտն ամբողջութամբ լուծվեց սուբյեկտի մեջ: «Յերբ վորդին ճանաչում է ինքն իրեն կամ հանգում է իր ինքնագիտակցության, այն ժամանակ ճանաչելին և ճանաչողը միանգամայն նույնացվում են»: 1) Սա նշանակում է, վոր գերմանական կրասիկ իդեալիզմի ավարտողն էլ վոչ միայն անկարող յեղավ հարուցված հարցը դրականորեն լուծելու, այլև մի բան էլ հետ գնաց նվաստացնելով սուբյեկտի դերը: Յեվ դա բնական է: Իդեալիզմը ջլատեց դիալեկտիկայի հեղափոխական վոգին և Հեգելը բացահայտորեն հայտարարեց, վոր «համաշխարհային պատմության հիմքում ընկած է գերագույն նպատակ» և մարդիկ միայն հետևում են այս նպատակի, այս աստվածային պլանի կատարմանը: Հեգելը վախեցավ Ֆիխտեյական սուբյեկտի ակտիվ հեղափոխական վոգուց և ջանաց վորքան կարելի յե սահմանափակել վերջինի գործողություններին շրջանակները, վերածել նրան աստծու պասսիվ կամակատարի: Ենդեղը հենց այդ հանգամանքը նկատի ունենալով՝ գրում էր, վոր մեծ մտածողը պարտավոր էր հոգ տանել այն մասին, վոր հեղափոխական տարրերը, յեղնելով նրա փիլիսոփայությունից, հեռու չգնային իրենց քաղաքական պահանջներին մեջ, այլ մնային պրոլետարական միապետության խոնարհ ծառաները: Մարքսին և Ենգելսին հարկավոր չէր մտածել այդ մասին, նրանք հանդես յեկան իբրև հեղափոխական պրոլետարիատի ներկայացուցիչներ, ուստի նրանք ամբողջ խրատությամբ մերժեցին սուբյեկտի իդեալիստական ըմբռնումը: Սուբյեկտը, — դա հասարակ արստրակցիա չէ, վոգի չէ, կամ բանականություն, վոր ուսու կեցություն չունի, այլ միանգամայն որյեկտիվ էակ: Յեթե բուրժուական մտածողները հոգեկան աշխատանքն անջատելով նյութականից, «հոգեկան արտադրությունը» «կյանքի անմիջական արտադրությունից», մարդու ինտելլեկտուալ կողմը նյութականից՝

1) Հեգել, «Վոգու Ֆենամենտոլոգիան», էջ 10:

յեկան «ամենադոր» իդեալիստական յեղրակացությունների, Մարքսն ու Ենգելսն ընդհակառակը, յեղնելով նյութական ու հոգեկան կյանքի արտադրությունների միասնությունից գտան, վոր սուբյեկտը որյեկտի գոյության ձևն է, ուստի կարողացան վերջնականապես հաղթահարել իդեալիզմը և կանգնել վոչ միայն գիտության, այլև հասարակության վերակազմության ճանապարհի վրա:

Ինդիվիդը, սուբյեկտը «մարմնական կազմակերպություն» ունի և իբրև այդպիսին հանդիսանում է բնության մի մաս: Մարդը, իբրև հասարակական կենդանի, սեփական արտադրության արգասիք է, այն գործողության, յերբ սուբյեկտը, արտադրության գործիքներ արտադրելով, սկսեց ակտիվորեն ներգործել բնության վրա և փոփոխել այն: Այս արտադրությունը էր և հանդիսանում է նյութական արտադրություն, այնպես վոր սուբյեկտը չի կարող լինել գերբնական սուբյեկտ: Նա իրականություն է և իբրև այդպիսին միաժամանակ հանդիսանում է պատմական սուբյեկտ: «Սուբբ Ընտանիքի» նախապատրաստական աշխատանքներում Մարքսը գրում էր, վոր «թե աշխատանքի նյութը, թե մարդն իբրև սուբյեկտ հանդիսանում է շարժման արդյունք և յեղակետ»: Սա ուղղված էր ընդդեմ սուբյեկտի մետաֆիզիկական ըմբռնման: Իդեալիզմը սուբյեկտին վոչ միայն զրկեց իր «մարմնականությունից», այլև նրան հայտարարեց միանգամ ընդմիջտ տրված պատրաստի, կատարյալ ձևով, սրանով իսկ գիտությունը վերածելով անպտուղ անուրջի: Ուստի իսկական գիտության համար պայքարը միաժամանակ պայքար էր վոչ թե առհասարակ սուբյեկտի մատերիալիստական ըմբռնման, այլ նրա դիալեկտիկական-մասեփախիսական ըմբռնման համար: «Գերմանական իդեոլոգիայի» մեջ Մարքսն ու Ենգելսն ասում են, թե «գիտակցություն», հետևաբար նաև սուբյեկտը «է առաջուց պատմական պրոդուկտ և մնում է այդպիսին, քանի դեռ առհասարակ գոյություն ունեն մարդիկ»: 1) Փիլիսոփաները, այս թվում նաև Ֆոյերբախը, խոսում էյին սուբյեկտի մասին առհասարակ, արատրակտ մարդու մասին, Մարքսն ու Ենգելսն ապացուցեցին,

1) Մարքս և Ենգելս, Արխիվ, I գիրք, էջ 220: Ընդգծումը մերն է:

վոր մարդը պատմական եակ է, և իբրև այդպիսին կոնկրետ է վոչ միայն այն մտքով, վոր նրա եյուեթյունը, նրա գիտակցությունը և այլն մշտապես վորոշվում են հասարակութան, ու նրա արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների գարգացման աստիճանով, հասարակութան ներսում դասակարգային պայքարի խորացման աստիճանով և այլն: Բայց մարդու այս հասարակական եյուեթյունը հակասության մեջ չի մտնում նույն սուբյեկտի բնական եյուեթյան հետ վորչափով վոր վերջինս մտքինգոն չէ, մեկուսացած ատոմ չէ, այլ հասարակության անդամ, նրա առաջնահիմքը: Հասարակության մեջ կրկին անգամ հաստատվում է սուբյեկտի ռեալությունը, նրա «մարմնականությունը»: «Հասարակությունը, մարդու և բնության միասնության ավարտուն գոյությունն է, բնության իսկական հարությունը, մարդու ավարտուն նատուրալիզմը և բնության ավարտուն հումանիզմը»,<sup>1)</sup> ասում է Մարքսը: Հեզելը ջանում եր հասարակությունը հակադրել բնությանը այն հիման վրա, վոր իբր թե հասարակությունը, հասարակական սուբյեկտը, վոզին բնորոշ է նրանով, վոր ոժտված է գիտակցությամբ և իրավունք ունի կատարելագործվելու ժամանակի մեջ: Մարքսը մերժեց այս թեզիսը, գտնելով, վոր «մտածության մեջ» սուբյեկտը «կրկնում է միայն իր ռեալ կեցությունը», հետևաբար վոչ մի հիմք չկա մարդկանց գիտակցության մեջ տեսնելու սուբյեկտի վոչ ռեալության պատճառը: Գիտակցությունը կամ մտածությունը վորոշակի հարաբերություն է դեպի շրջակա միջավայրը: Իհարկե, այս հատկությամբ ոժտված է միայն մարդը, բայց նա մի ինչ-վոր գերբնական բան չէ, այլ արտադրության հարաբերություն, բնության վրա ակտիվ ներգործելու հարաբերություն, նրա փոփոխությունը և յենթարկումը սուբյեկտին:

Սուբյեկտն իր բնությամբ ակտիվ է, նա կերտում է իր սեփական պատմությունը, հետևաբար, նա չի կարող լինել բնության ու հասարակության փոփոխության պարզ գիտողը, կամ աստվածային պլանի կատարողը, ինչպես մտածում եր Հեզելը: «Նման այն բանին, ինչպես հասարակությունն արտա-

<sup>1)</sup> Մարքս և Ենգելս, III հ, էջ 623:

դրում է մարդուն իբրև մարդու, այնպես ել մարդն արտադրում է հասարակությունը»:<sup>1)</sup> Արտադրել հասարակությունն նշանակում է լինել ակտիվորեն գործող, վոչ թե «գերագույն կամքի» կույր կատարող, այլ սեփական կյանքի ստեղծարար, հետևապես ամեն մի նպատակի ու ամեն մի պլանի ստեղծարար: Յերբ Մարքսը «կապիտալ»ում ասում է, թե «գիտակցական նպատակը վորոշում է նաև սուբյեկտի գործողությունների բնույթը» նա դրանով նաև ընդգծում է այն հանգամանքը, վոր սուբյեկտը գործում է վոչ տարերայնորեն, այլ պլանաչափ, գիտակցաբար, վորպիսի հանգամանքն ավելի ուժ է տալիս նրա գործողություններին: Իր վաղ աշխատություններում (Հեզելի իրավունքի փիլիսոփայության քննադատությունը) Մարքսը մեղադրում եր Հեզելին նրանում, վոր նա փաստորեն ջլատել է սուբյեկտին, վերածելով այն Շեքսպիրի կոմեդիացի («Сонь в лѣтнюю ночь») առյուծի, վորև առյուծ է և՛ առյուծ չէ. և՛ գործում է, և՛ չի գործում, դրանով իսկ ստեղծելով ակտիվության միբամեք և կամ ստեղծագործական խաբեյուրյուն, վորպեսզի չանհանգստացնի՝ պրոլետական միապետականների խաղաղ կյանքը: Պրոլետարիատը, հետևաբար նաև նրա իդեոլոգն այսպիսի խաբեյությամբ չի կարող զբաղվել և նրա կարիքը չի զգում, ուստի սուբյեկտը, մարդիկ, նրանց առաջավոր մասը՝ բանվոր դասակարգը, Մարքսի ու Ենգելսի կարծիքով, հանգիստանում են հասարակության ամենահեղափոխական ուժը:

Բայց ի՞նչպես է այս ուժը, սուբյեկտը, վերաբերվում արտաքին աշխարհին, որյեկտին: Ի՞նչն է հանգիստանում սկզբնականը, վորոշիչը: Վերև ասվածից հետևում է, վոր Մարքսն ու Ենգելսը վորոշիչ էյին համարում մատերիան, նրանց ու Ենգելսը վորոշիչ չէին համարում մատերիան, հարցում կարփիլիսոփայության լեալիտը որյեկտն եր: Այս հարցում կարծես թե նրանք չէին տարամտվում 18-րդ դարի մատերիալիստների ու Ֆոյերբախի հետ: Մատերիան անտարակուսելի ռեալություն է, վորից մենք յեղնում ենք, ասում էյին մատերիալիստները մինչև Մարքսն ու Ենգելսը: Սակայն, հենց այս մատերիալիստները, որինակ՝ Մալինոգան կամ Դիգրոն գիլոմատներ էյին, վորպիսի տեսակետը բնավ ել մինչև վերջ գոլիստներ էյին, վորպիսի տեսակետը բնավ ել մինչև վերջ

<sup>1)</sup> Մարքս և Ենգելս, III հ, էջ 623:

հետևողական մատերիալիզմի տեսակետը չէ։ Իմացաբանության հարցերում, վորը հանդիսանում է մտածության ու կեցության հարաբերության հարցի «մյուս կողմը», նրանք չկարողացան վերջնականապես ոճիքներն աղատել հին փիլիսոփայական սխտեմների ազդեցութունից։ Թեև իրն իր մեջ իմանալիության հարցում չզարգացրին ազնոստիցիզմի տեսակետը, բայց այնուամենայնիվ, մինչ մարքսյան մատերիալիստները սպառիչ, հեղափոխական-մատերիալիստական պատասխան չտվին դրան։ Հորատը գրում էր, վոր «մենք չգիտենք մատերիալի վոչ եյությունը, վոչ ել իսկական բնույթը, թեև մենք ի վիճակի յենք նրա հատկութուններից ու վորակներից միքանիսը ճանաչելու՝ մեզ վրա նրանց ներգործելու յեղանակով, վորը մենք չենք կարող ասել նաև աստծու մասին»։<sup>1)</sup> Իսկ ինչ վերաբերում է Ֆոյերբախին, վորը չէր տառապում գիլոգոիզմով, կամ այնպիսի թերություններով, վորոնք կողմնակիորեն գեթ արտաքին նմանություն ունեն ազնոստիցիզմի հետ, հայեցողական, արատրակտ մատերիալիստ էր։ Այնպես, վոր յեթե կլասիկ իդեալիստներն որչեկտի ու սուբյեկտի հարաբերակցությունը լուծում էին յեղելով սուբյեկտի ու նրա առարկալիմացության արատրակտ փոխհարաբերությունից, մատերիալիստները մինչև Մարքսն ու Ենգելսը կարողացան այս հարցին տալ միայն մատերիալիստական բնութի այն իմաստով, վոր ինչպես որչեկտը, այնպես ել սուբյեկտը հայտարարեցին ռեալ գոյություն ունեցող։ Սակայն, վոչ առաջինները և վոչ ել յերկրորդները իսկապես միասնությանը չհասան։ Հեգելի փիլիսոփայության մեջ որչեկտը նույն սուբյեկտն է, բայց միայն վերցրած գոնե խոսքով անկախ մարդուց, ուստի վերջիվերջո զարգացումը հանգում է որչեկտի ու սուբյեկտի լիակատար նույնացման և որչեկտի իրական իմացության փոխարեն ըստացվում է կատեգորիաների կամայական կառուցում։ Ֆոյերբախը կարողացավ հաղթահարել Հեգելի այս իդեալիզմը, բայց միայն մեխանիստական մատերիալիզմի հիման վրա, նրա որչեկտը չէր լուծվում սուբյեկտի մեջ, սա մի հսկայական քայլ էր առաջ, բայց սրա փոխարեն նա զարգացնում էր որչեկտի

1) Հորատ, «Բնության սխտեմը», էջ 373:

ու սուբյեկտի փոխազդեցության տեսակետը զգայական հայեցության, մտածության, այսինքն՝ թեորիական պրակտիկայի հիման վրա։ Ֆոյերբախը յերբեք ի վիճակի չէ զգայական աշխարհը դիտելու իբրև այն կազմող ինդիվիդուների ամբողջական կենդանի, զգայական գործունեյություն, ուստի, յերբ, որինակ, առողջ մարդկանց փոխարեն տեսնում է գեղձախտից տառապող ամբոխ, աշխատանքից հյուծված ու թոքախտավոր չքավորների, ստիպված է փրկություն գտնել «գերագույն ինտուիցիայի» իդեալական «հայասարեցման» մեջ, այսինքն, ստիպված է կրկին ընկնելու իդեալիզմի մեջ հենց այնտեղ, վորտեղ կոմունիստական մատերիալիստը տեսնում է արդյունաբերության վերակազմություն և հասարակական բաժանման անհրաժեշտություն և սրա հետ միաժամանակ՝ պայման»։<sup>1)</sup> Այսպիսով որչեկտի ու սուբյեկտի ռեալության, նրանց փոխազդեցության ճանաչումը դեռևս բավական չէ աշխարհը փոխելու համար, վորպեսզի գիտական միտքը դուրս բերվի իդեալիստական ճանճից և դրվի ճիշտ ուղու վրա։ Պրակտիկան, զգայական — մարդկային գործունեյությունը հիմնական է հանդիսանում այս հարցերի գիտական լուծման համար, ուստի Մարքսն ու Ենգելսը հենց սրա վրա էյին կենտրոնացնում իրենց ուշադրությունը։ Վոչ թե թեորիայի, այլ «մարդու պրակտիկայով պետք է մարդ ապացուցի ճշմարտություն, այսինքն՝ իր մտածության իրական, այս կողմային լինելը։ «Պրակտիկայից մեկուսացած իրական, այս կողմային լինելը։ «Պրակտիկայից մեկուսացած մտածության իրական թե վոչ իրական լինելու վերաբերյալ մտածության իրական թե վոչ իրական լինելու վերաբերյալ վեճը գուտ սխալասիկ վեճ է» գրում էր Մարքսը դեռևս Ֆոյերբախի վերաբերյալ թեզիսներում։ Այնպես վոր Մարքսն ու Ենգելսը փիլիսոփայության հիմնական հարցը դեռ ամենասկզբից լուծեցին միանգամայն այլ կերպ, պրակտիկ, գործն միասնությամբ հիման վրա։

Մարդու առաջին հարաբերությունը գեպի բնությունը՝ արտաքին աշխարհը փոխելու հարաբերություն է, նրա յենթարկումը սուբյեկտին։ Յերբ առաջին մարդը ջոկվեց կենդանիների թագավորությունից, նա սկսեց արտադրել արտադրության գործիքներ և նրանց նից, նա սկսեց արտադրել արտադրության աշխարհը և ինքն իրեն։ Հե-

1) Մարքս և Ենգելս, Արևիկ I դերք, էջ 218:

տևաբար, ինչպես պատմականորեն, այնպես էլ քառամարանորեն առաջինը հանդիսանում է պրակտիկան: Վոչ միայն թեորիական սկզբունքներն են իրենց հաստատման համար կարիք դրում պրակտիկայի, այլև ինքը սուբյեկտը, հետևաբար նաև նրա միասնությունը որչեկտի հետ, գոյություն չունի այս պրակտիկայից դուրս: Միասնությունը հարաբերության վորոշակի ձև է, ավելի ճիշտ գրեթե ասելով է նրա հարաբերություններին հատուկ ձևերով: Յերբ մենք ասում ենք, թե սուբյեկտն ու որչեկտը միասնական են, սրանով իսկ մենք նշում ենք վորոշ կապի առկայությունը, վորը կարող է արդյունք հանդիսանալ միայն վորոշակի գործողությունների: Միայն զարգացման հետևանքով, յերբ մարդն անջատվեց բնությունից և վորոշակի հարաբերությունների մեջ մտավ նրա հետ, միայն այն ժամանակ միասնությունն առաջացավ և կարող եր առաջանալ որչեկտի ու սուբյեկտի միջև: Մտերիայի վորակապես տարբեր, բայց անորգանական ձևերի հարաբերակցությունը կամ նույնիսկ անորգանաբերությունը որչեկտի ու սուբյեկտի միասնության հարաբերությունն է, վորչափով վոր սուբյեկտը ամեն մի որգանական եակ չէ, այլ մարդ, արտադրող ու մտածող մարդիկ: Այս մարդկանց գոյությունը հանդիսանում է սուբյեկտի ու որչեկտի միասնության անընդհատ վերարտադրություն, այսինքն՝ այնպիսի հարաբերությունն նրանց միջև, յերբ մարդը գործելով, ակտիվորեն փոխում է արտաքին աշխարհը, հայթայթում է գոյության միջոցներ և զարգացնում ինքն իրեն: Իսկ այս հարաբերությունը հենց այն պրակտիկան է, վորից դուրս անմտություն է վորևե միասնություն:

Ենդեղան ասում է, վոր «իրական աշխարհի ճիշտ արտացոլման» պորբեմը մտածության ու կեցության հարաբերության «մյուս կողմն է» այլ կերպ ասած՝ սուբյեկտի ու որչեկտի միասնության արտահայտության մյուս ձևը: Յերբ յես վորևե բան անդրադարձնում եմ իմ գիտակցության մեջ, յես վորոշակի հարաբերությունների մեջ եմ մտնում եմ իմացության առարկայի հետ: Այս հարաբերությունների մեջ հաստատվում է իրական աշխարհի օբյեկտությունն ինձնից դուրս, բայց միևնույն ժամանակ ակներև է դառնում և այն փաստը, վոր յես որչեկտի գոյության մի ձևն եմ, նրա ավելի զարգացած գերագույն ձևը կաղ-

մակերպվածություն իմաստով: Յես անդրադարձնում եմ իրական, ասենք բիրտղիական աշխարհը, բացահայտում եմ այս աշխարհի որինաչափությունը: Բայց իմ հենց այս գործողություններով յես վոչ միայն գալիս եմ այն յեզրակացություն, վոր աշխարհը գոյություն ունի ինձնից դուրս, այլև համոզվում եմ նրանում, վոր կապ կա մարդու և կենդանիների մնացած աշխարհի միջև, վորովհետև իմացություն պրոցեսում ինձ համար ավելի ակներև են դառնում այն բոլոր թեկերը, վորոնք ինձ կապում են այս աշխարհի հետ: Այնպես վոր, անդրադարձումը միևնույն ժամանակ հանդիսանում է որչեկտի ու սուբյեկտի միասնության հաստատումը: Բայց անդրադարձումը քափանցում է արտաքին աշխարհը, նրա վոչ թե եմպիրիկական վոլզգար լուսանկարը, այլ բերիակամ իմացումն է պրակտիկայի հիման վրա: Իրականության թեորիական իմացությունը նրա պրակտիկ յուրականություն թեորիական իմացությունը նրա պրակտիկ յուրականությունն է, ուստի անդրադարձումը չի կարող վրացման մյուս կողմն է, կամ թե չէ վերջիններս պարզ նել սոսկ փաստերի հավաստում, կամ թե չէ վերջիններս պարզ վոլզգար նկարագրություն: «Անդրադարձումը կարող է լինել անդրադառնալի ճիշտ, մոտավոր պատճենը, բայց այստեղ նույնություն մասին խոսելն անմտություն է»<sup>1)</sup> Նույնությունը հանգում է պասսիվ նկարագրության և ծառայում է օբյեկտից յիսին, իսկ բնության իրական «անդրադարձումը մարդու մտքերի մեջ» «հակասությունների շարժման ծագման և նրանց լուծման»<sup>2)</sup> Հակասությունների լուծումը ման հավիտենական պրոցես»<sup>2)</sup> Հակասությունների լուծումը ման հավիտենական փոփոխություն է, հետևաբար, պրակտիկա-աշխարհի պրակտիկ փոփոխություն է, հետևաբար, պրակտիկա-աշխարհի պրակտիկ փոփոխություն է: Հենց յից դուրս անդրադարձման թեորիան անմտություն է: Հենց յից յեզրակետ ունի Մարքսը, յերբ ասում եր, թե փիլիսոփայության յեզրակետ ունի Մարքսը, յերբ ասում եր, թե փիլիսոփայության յեզրակետ ունի Մարքսը:

Փոփոխությունը բացասումն է, հնի վերացումը նորի կողմից: Անդրադարձման թեորիան հենց այդ պրոցեսի անդրադարձումն է և ինքը գիտակտիկական պրոցես է: Գիտությունը միջև Մարքսն ու Ենգելսը, հետևաբար նաև փիլիսոփայությունը կամ բացասում եր այս թեգիսը, կամ, ընդունելով այն, աղճատում, խեղաթյուրում եր բնության ու հասարակության իսկա-

1) Լենին, XIII հ., էջ 264:  
2) Լենինյան ժողովածու, IX, էջ 227:

կան դիալեկտիկան: 18-րդ դարի մեխանիստական մետաֆիզիկական մատերիալիզմը հետազոտելով մտածութեան ու կեցութեան հարաբերակցութեանը միայն բովանդակութեան տեսակետից, մնաց առարկայի իմացութեան մակերեսին, տեսալ նրա միայն քանակական փոփոխութեանը, չհասավ մինչև իսկական ելուծյան, մինչև ներքին որինաչափութեանը, մինչև բոլորի վորակները ու փոխանցումների իմացութեանը բոլորի մեջ: Հեգելի իդեալիստական դիալեկտիկան բովանդակութեանից անցավ նաև ձեւերին, առարկայի արաւքին նկարագրութեանից դեպի փոփոխութեան ներքին պատճառների ուսումնասիրութեանը, դեպի իրականութեան բազմապիսութեանների փոխթափանցումները, սակայն այս բոլորը միայն իդիալիզմի, ֆանտաստիկայի տեսակետից, և վոչ թե գիտություն լինելով գիտական աշխարհայացի: Իսկական գիտութեանը պահանջում է ձևերը դիտել բովանդակութեան տեսակետից, վերջինիս հիման վրա: Հեգելի փիլիսոփայութեան մեջ ձևը դարձավ գերիշխող, նա կտրվեց իր բովանդակութեանից և դարձավ պարապ ձև, բայց միևնույն ժամանակ նրա աշխարհայացքի վախճանական հիմք: Իր փիլիսոփայութեան նպատակը Հեգելը տեսավ բացառապէս ձևերի նվաճման մեջ, որինակ գիտելութեան ձևը, կրօնի ձևը, պետութեան ձևը և այլն: Վորովհետև Հեգելի կարծիքով իբր թե դարգացման հետեանքով բովանդակութեանն անհայտանում է անվերջանալի ձևով և պրոցեսի վերջում մնում է զուտ ձևը, վորն իբր թե իրենից տալիս է իր սեփական բովանդակութեանը, ուստի դարգացման վորոշ կետում, յերբ բովանդակութեանը գտնում է իր բացարձակ ձևը, հետագա շարժումը կանգ է առնում: Այստեղ Հեգելի դիալեկտիկան, վորն արդեն ամենասկզբից իր իդեալիստական բնույթի հետեանքով ներքուստ ջլատվել էր, վերջնականապէս անցնում է մետաֆիզիկալի: Այնպէս վոր, վոչ միայն ֆրանսիական մատերիալիստները, այլև Հեգելը չկարողացան գիտութեանն այս հարցում հանել ճիշտ ուղու վրա: Այս խնդիրը լուծելու համար հարկավոր էր հալթահարել բնութեան ու հասարակութեան մասին ունեցած մետաֆիզիկական աշխարհայացքը, հարկավոր էր բոլոր չերևույթները քննարկել դիալեկտիկայի տեսակետից և արմատացնել այն ամեն մի գիտութեան մեջ:

Ենգելսի մասին հողված գրելուց 13 տարի հետո Լենինն ավելի ևս կոնկրետացնելով իր մտքերը Մարքսի ու Ենգելսի ծառայութեանների մասին գիտութեան ասպարիզում, գրում էր. «Մարքսն ու Ենգելսը, աճելով Յոյերբախից և արիանալով գերչակների դեմ մղված պայքարում, բնականաբար ամենից ավելի ուշադրութեան էյին դարձնում մատերիալիզմի փիլիսոփայութեան կառուցումը վերեւից կատարելու վրա, այսինքն վոչ թե մատերիալիստական իմացաբանութեան, այլ պատմութեան մատերիալիստական ըմբռնման վրա: Մարքսն ու Ենգելսն այս պատճառով իրենց չերկերում ավելի էյին ընդգծում դիալեկտիկական մատերիալիզմը քան դիալեկտիկական մատերիալիզմը, ավելի էյին պնդում պատմական մատերիալիզմի վրա, քան պատմական մատերիալիզմի»: 1) Յեւ սա միանշանակ հասկանալի չէ, վորչափով վոր վոչ մի գիտութեան հնարավոր չէ առանց մինչև վերջ հետեւողական դիալեկտիկական մեթոդի: Կլասիկ քաղաքատնտեսութեանը մետաֆիզիկ գիտութեան էր, նրա մեթոդը հակադիալեկտիկական մեթոդ էր, այդ պատճառով էլ կապիտալիստական հասարակութեան էյական հարաբերությունները նրա համար մնացին անհասկանալի և նա չհասավ դրանց գիտական իմացութեանն աստիճանին: Որինակ՝ ուսումնասիրելով աշխատուժի գնման ու վաճառքի պրոբլեմը, նա աշխատուժի արժեքի մեջ տեսավ աշխատանքի արժեքը, այսինքն՝ մնաց, յերևույթի մակերեսին, վորը սոսկ չերևութապէս է պայացուցում թե «հատուցվում է վոչ թե աշխատուժի արժեքը, այլ նրա ֆունկցիայի, այսինքն բուն իսկ աշխատանքի արժեքը»: 2) Գիտական իմացութեանը չի կարող այս չերևույթն ընդունել իբրև իսկական էյություն: Յերևույթները հավաստել — սա մտածութեան բնութագրիկ (ХОДЯЩИЙ) ձևերի գործն է, իսկ գիտական հետազոտութեանը դրսևորում է յերևույթների էյութեանը, ցույց է տալիս նրանց հիմքը: Ընթացիկ մտածութեան համար չերևույթը արված է մեկընդմիջտ պատրաստի ձևով, նա չի տեսնում մի չերևույթի փոփոխութեանը և անցումը մյուսին: Գիալեկտիկական մտածողների՝ Մարքսի ու Ենգելսի համար չերևույթը էյութեան դրսևո-

1) Լենին, XIII հ., ուս. էջ 269—270:

2) Մարքս, Կապիտալ, I հ., ուս. 1923 թ., էջ 523:

բունն ե, իսկ եյությունն իբրև որչեկտ հանդիսանում ե լի-  
նելութան հավիտենական պրոցես: Որինակ, նուցն աշխատա-  
վարձը մի ամբողջ պատմություն ունի: Մշտապես և ամենու-  
րեք չե, վոր, ասենք թե, գոյություն ե ունեցել հատավճարն,  
իբրև աշխատավարձի գրասերման ձև, «Լոնդոնի գրաշարները սո-  
վորաբար գործավարձ են ստանում, ժամանակավարձը նրանց  
մոտ բացառություն ե: Ընդհակառակը, գավառական գրաշարնե-  
րի մոտ ժամանակավարձը կանոն ե, հատավարձը՝ բացառու-  
թյուն»: <sup>1)</sup> Լոնդոնում կապիտալիստական հարաբերություններն  
ավելի դարգացած եյին, քան գավառում, ուստի մի տեղ տի-  
րապետում եր աշխատավարձի հատավարձային ձևը, մյուս տեղ՝  
ժամանակավարձային: Հետևաբար, աշխատավարձի յուրաքան-  
չյուր ձևի եյությունը ճանաչելու համար հարկավոր ե իմանալ  
այս ձևերը հարուցող պատճառները, ուրիշ խոսքով՝ հարկավոր  
ե ուսումնասիրել կապիտալիստական հարաբերությունները: Այն  
հանգամանքը, վոր կլասիկ քաղաքատնտեսությունը չկարողա-  
ցավ հասնել որինակ աշխատուժի արժեքի իսկական եյության  
և նրա հետ կապված ուրիշ յերևույթների արմատներին, — գա  
բացատրվում ե նրանով, վոր նա յելով վոչ թե հիմնականից,  
հատկապես բուրժուական հասարակության յուրահատուկ հարաբե-  
րություններից, իր ուսումնասիրության որչեկտը վերցրեց վոչ թե  
շարժման մեջ, այլ պատրաստի ձևով: Առաջադրած խնդիրը լու-  
ծելու համար կլասիկ քաղաքատնտեսությունը շուկայական հա-  
րաբերությունների — պահանջարկի ու առաջարկի — հետադրու-  
թյունից հասավ մինչև «բնական գները», հույս ունենալով այս  
ճանապարհով «աշխատանքի պատահական գների միջով հասնել  
մինչև նրա արժեքին»: Բայց այստեղ նա դեմ առավ նոր յերե-  
վույթի՝ արտադրության ծախքերին: Իսկ ի՞նչ ե ներկայացնում  
դա իրենից: «Այս հարցը քաղաքատնտեսության համար անգի-  
տակցաբար փոխարինվեց սկզբնական հարցով, վորովհետև աշ-  
խատանքի իբրև այդպիսին արտադրության ծախքերը հետա-  
զոտելիս նա պատվում եր արտավոր շրջանում և տեղից չեր  
շարժվում»: <sup>2)</sup> Հետևաբար, պրոցեսի ընդունումը, Մարքսի ու

<sup>1)</sup> Մարքս, Կապիտալ, I հ., ատս. 1923 թ. Կր. Եջ 532.

<sup>2)</sup> Մարքս, Կապիտալ, I հ., Եջ 519.

Մենգելի կարծիքով կենտրոնական հարց ե գիտական մտածու-  
թյան համար:

Պրոցեսը որչեկտի ուես վոփոխությունն ե, նրա զանազան  
շարժումների փոխանցումը, հնի վոչնչացումը և վորակապես  
նորի գոյացումը: Այնպես վոր ամեն մի փոփոխություն  
կամ շարժում չի կարելի ընդունել և դարձնել գիտական հետա-  
զոտության հիմք: Հետագայում ընդհանրացնելով, խորացնելով,  
ու գարգացնելով Մարքսի ու Մենգելի հիմնական մտքերն այս  
հարցի վերաբերյալ, Լենինը գրեց. «գարգացման յերկու հիմնա-  
կան (կամ յերկու հնարավոր, կամ յերկու, պատմության մեջ  
նկատվող) կոնցեպցիաներ (եվոլյուցիաները) կան. — գարգացումն  
իբրև նվազում ու մեծացում, իբրև կրկնություն ու գարգա-  
ցում, իբրև հակադրությունների միասնություն (միասնականի  
յերկարում, փոխադարձաբար բացառող հակադրություններ և  
փոխհարաբերություններ նրանց միջև): Առաջին կոնցեպցիայի  
դեպքում շարժումը մնում ե սովերի մեջ, ինքը շարժումը նրա  
շարժիչ ուժն ե, նրա աղբյուրը, նրա շարժառիթը (կամ այս  
աղբյուրը փոխադրվում ե արտաստժու, սուբյեկտի մեջ etc):  
Յերկրորդ կոնցեպցիայի դեպքում գլխավոր ուշադրությունը  
դարձվում ե հենց «բուն» շարժման աղբյուրի իմացության  
վրա: Առաջին կոնցեպցիան մեռած ե, աղքատ ե, չոր ե: Յերկ-  
րորդը կենսունակ ե: Միայն յերկրորդն ե տալիս բանալին  
թուխքների, «ատիճանականության խզման», հակադրության  
վերածելու համար, հինը վոչնչացնելու և նորի առաջացման հա-  
մար»: <sup>1)</sup> Յերբ 18-րդ դարի մատերիալիստները շարժումը հայ-  
տարարելով մատերիալի ատրիբուտ, բայց հետու չգնալով շարժ-  
ման մեխանիկական ձևից, ճանապարհ քացեցին ինքնաշարժ-  
ման բացասման համար, իսկ Հեգելը, ընդունելով վերջինս,  
բայց իբրև իդեալիստ վերջում ստիպված յեղավ հայտարարե-  
լու, վոր շարժումն «ունի բացարձակ վախճանական կետ»: <sup>2)</sup>  
Մարքսն ու Մենգելն ընդհակառակը, ապացուցեցին, վոր շարժ-  
ման մեխանիկական ձևը շարժման բազմաթիվ ձևերից մեկն ե  
միայն, և նա իբրև հավիտենական փոփոխություն վոչ միայն

<sup>1)</sup> Լենինյան ժողովածու XII, Եջ 324.

<sup>2)</sup> Հեգել, IX հ., Եջ 39.

սկիզբ չունի, այլ չեղբեք չի վերջանա: Յերբ եվոլյուցիոն թեորիայի ներկայացուցիչները դարգացումը համարում ելին սոսկ աստիճանական փոփոխություն, իսկ Հեղելը տարվ այս թեորիայի փալուն ջննադատությունն, իհարկե իրրե իղեալիստ գրում եր, թե «պետական հեղաշրջումները կատարվում են առանց բուն հեղափոխությունների, յերբ այս րմբունումը դառնում է ընդհանուր սեփականություն: հիմնարկները թափվում են իրրե հասուն մրգեր, անհայտանում են հայտնի չե թե ինչպես, ամենքը յենթարկվում են այն անխուսափելի փաստին, վոր նա, պետք է կորցնի իր իրավունքը» փաստորեն նորից մնաց եվոլյուցիոնիզմի շրջանակներում,<sup>1)</sup> Մարքսն ու Ենգելսը վերջնականապես հաղթահարեցին ամեն տեսակ գունդիկ եվոլյուցիոնիզմ, բացահայտելով հարցի հեղելյան րմբուման ունակցիոն ելությունը: Եվոլյուցիան հեղափոխական դիալեկտիկական շարժման սոսկ մի մոմենտն է, սովորեցնում էլին Մարքսն ու Ենգելսը: Չարգացումը յերբեք չի կատարվում նախապես սահմանված որենքներով, նա կենդանի յե ու բազմազան: Ինչ վերաբերում է աստիճանականության, ապա այն մտնում է դարգացման ընդհանուր պրոցեսի մեջ, վորպես զարգացման մոմենտներից մեկը: Բայց վորոշ կետում աստիճանականություն անխուսափելիորեն ընդհատվում է և տեղի յե ունենում հեղափոխական թուիչք մի թագավորությունից մյուսը, անցում հին վորակից դեպի նոր վորակ: Յերբ արտադրողական ուժերի զարգացումը հասնում է մինչև վորոշակի աստիճանի, անխուսափելիորեն տեղի յե ունենում հեղափոխական թուիչք արտադրության հին յեղանակից դեպի նոր յեղանակը, գրում է Մարքսը «կապիտալում»: Բայց սխալ կլիներ կարծել, թե աստիճանականության շրջանը մի ինչ-վոր խաղաղ, հնի անտարբեր փոփոխություն է: Վորչափով վոր եվոլյուցիայի շրջանը կամ քանակական կուտակումը հեղափոխական ալտի պատրաստման շրջան է, խոսք չի կարող լինել բացարձակ խաղաղ փոփոխություն մասին: Այն, ինչ եվոլյուցիոնիստներն անվանում են խաղաղ շարժում, իրականում հակադրությունների պայքար է: Սովորական տափակ մտածողի համար այս թեղիան անհասկա-

1) Հեղել, X 5, էջ 206:

նալի յե, նա չի կարող միասնություն մեջ գտնել այս նույն միասնություն զանազան մոմենտների կամ կողմերի պայքարն ու հակադրությունը, միասնություն, վոր կողմում է նրա իսկական ելությունը: Մարքսն ասում է, թե «վորոշ տեսակետով բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի տարբերությունն անհասարակ ներկայանում է պատրանքային ձևով»: Հարաբերական հավելյալ արժեքը բացարձակ է և ընդհանրապես, նայած թե այս հարցին ինչ տեսակետից է մոտենում հետազոտողը: Ուստի Մարքսը շարունակում է բացատրել. «իսկ յեթե ուշադրություն դարձնենք հավելյալ արժեքի շարժման վրա, ալս կարծեցյալ նույնությունն անհայտանում է: Քանի վոր արտադրության կապիտալիստական յեղանակն առաջացել է և դարձել արտադրության ընդհանուր յեղանակ, բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի տարբերությունն իրեն զգալ է տալիս, յերբ գործը վերաբերում է հավելյալ արժեքի նորմայի բարձրացմանն անհասարակ»: <sup>1)</sup> Գիտություն ինդիքն այն է, վորպեսզի պատրանքային նույնություն յետևում բացի հակաությունները և ցույց տա որչեկտի զարգացման տենդենցը: Նախկին գիտությունը, մինչև Մարքսն ու Ենգելսը գոյություն ունեցող գիտությունը բավականատում եր որչեկտի արտաքինը նկարագրելով, մինչդեռ հարկավոր եր բացահայտել ներքին որինաչափությունը, նրան հետաքրքրում եր վոչ թե նորն առաջացնող պատճառը, այլ միայն փաստերի հավաստումը: Նա բացարձակացնում եր պատճառականությունը, և մետաֆիզիկական գիտությունը չե կարող որչեկտի մեջ տեսնել համաշխարհային փոխադարձ կախման, ունիվերսալ կապի, անցքերի փոխադարձ շղկալման մոմենտ և այլն: Յերբ հարկավոր եր ցույց տալ անվերջանալի յերևույթների կապն ու փոխանցումը նա ամեն կերպ ջանում եր սահմանադատել մի յերբեցումը նա ամեն կերպ ջանում եր յեղանակից յեթողի մեթոդի: Մարքսի ու Ենգելսի դիալեկտիկական մեթոդի առավելությունն այն է, վոր նրանք առաջ անցան այս բոլոր սահմաններից եր: Բոլոր յերևույթները պատճառական կապ ունեն. բացարձակապես կտրված վոչինչ չկա, հայտարարեցին նրանք:

1) Մարքս, կապիտալ, I 5, էջ 491:

Ամեն մի կտրում հանգում ե յերևույթի արտոլլուտացման, այն բանին, վոր վորոշակի կետում զարգացման պրոցեսը կանգ ե առնում: Յերբ բուրժուական տնտեսագետները հայտարարեցին, թե ֆեոդալական հիմնարկները պատմական են և չկարողացան այդ սկզբունքը տարածել նաև բուրժուական պետության և տնտեսակարգի նկատմամբ, նրանք թույլ տվեցին այն մեթոդոլոգիական սխալը, վոր վորոշակի կետում արհեստականորեն կրտրեցին շղթան և սկսեցին կապիտալիստական հասարակութունը դիտել մեկուսացած: Այդ մեկուսացածության մեջ կապիտալը արտադրողական ուժերի զարգացման բացարձակ ձևն ընդունեց, իսկ պրուսական միապետութունը, շատ ավելի ուշ նաև բուրժուական դեմոկրատիան՝ կուլտուրական համակեցության վերջին սահմանը հայտարարվեց: Հաղթահարելով բուրժուական այս սահմանափակութունը, Մարքսն ու Ենգելսն ապացուցեցին, վոր կապիտալը «արտադրողական ուժերի զարգացման համար բացարձակ ձև» չե կամ «հարստության ձև, վորը բացարձակապես հաճընկնում ե արտադրողական ուժերի զարգացման հետ»: Կապիտալիզմի զարգացումն անխուսափելիորեն հանգում ե սոցիալիզմի: Սոցիալիզմը միանգամայն նոր հասարակարգ ե, վորը հենվում ե արտադրական նոր հարաբերութունների վրա, ուստի չի կարելի միևնույն որենքները կիրառել և՛ այնտեղ և՛ այստեղ: Որենքը եյականն ե յերևույթի մեջ: Վորչափով վոր փոխվում ե ինքը լերևույթը, իսկ տվյալ դեպքում հասարակարգը, փոխվում ե նաև նրա որենքը, հենց այն, վոր եյապես նրա մեջ չի կարող մնալ միևնույնը: Այսպիսով Մարքսն ու Ենգելսը հանգեցին իրականության կոնկրետ ուսումնասիրությանը, իստորիզմի խիստ տարածմանն ինչպես հասարակական, այնպես ել բնական յերևույթի վրա, և նրանց որենքների ուսումնասիրությանը: Նույնիսկ այնպիսի իբրև թե ընդհանուր որենք, ինչպես Չրի սառելը զրոյից ցած, պատմական որենք ե, ասում ե Ենգելսը, վորովհետև այնտեղ, վորտեղ Չուր չկա (որինակ լուսնի վրա) կամ բացակայում ե համապատասխան շերմաստիճանը (արևի վրա) խոսք անգամ չի կարող լինել այդ որենքի կիրառման մասին:

Տակավին իր վաղ աշխատութուններում Լենինը Մարքսի

ու Ենգելսի ուսմունքի այս կողմի վրա առանձին ուշադրություն դարձնելով գտավ, վոր շնորհիվ այդ կոնկրետության, իստորիզմի խիստ կիրառման հասարակական կյանքի ու հասարակական յերևույթների նկատմամբ, սոցիոլոգիան դարձավ գիտություն: Մինչև Մարքսն ու Ենգելսը սոցիոլոգները խոսում եյին առհասարակ հասարակության մասին, դատում եյին մարդկային պատմության ընդհանուր որենքների մասին, այդ պատճառով ել նրանց գիտությունն անպտուղ մնաց վորպես անուրջ: Մարքսի ու Ենգելսի մեծագույն ծառայությունը գիտական մտքի առջև նաև այն յեղավ, վոր առհասարակ հասարակության վերաբերյալ պարզապ խոսակցությունները նրանք փոխարինեցին մենակ կապիտալիստական հասարակության կոնկրետ ուսումնասիրությամբ և դրա հիման վրա տվին մարդկային պատմության ըմբռնման բանալին, ասում ե Լենինը:

Մարքսի մասին իր հողվածում Ենգելսը գրում ե՝ վոր «այն շատ կարևոր հայտնագործութուններից, վորոշումով Մարքսը ժամանակին իր անունը գրեց գիտության պատմության մեջ», այն ե, վոր նա «հեղաշրջում առաջացրեց համաշխարհային պատմության ամբողջ ըմբռնման մեջ», ապացուցելով, վոր «ամբողջ նախընթաց պատմությունը դասակարգերի պայքարի պատմություն ե, վոր ամբողջ միախաղաղ ու բարդ քաղաքական պայքարի մեջ բանը մշտապես վերաբերում ե հասարակության այս կամ այն դասակարգերի հասարակական ու քաղաքական գերիշխանությանը, իսկ գերիշխանության պահպանությունը—հին դասակարգերի կողմից, գերիշխանության հասնելու մասին—բարձրացող նորերի կողմից»: «Մարքսի յերկրորդ կարևոր հայտնագործությունը հանդիսացավ կապիտալի ու աշխատանքի հարաբերությունների հայտարարումը մինչև վերջ, ուրիշ խոսքով ասած այն բանի դրսևորումը, թե ինչպես ե արդի հասարակության մեջ՝ արտադրության գոյություն ունեցող կապիտալիստական լեղանակի ժամանակ կատարվում բանվորի շահագործումը կապիտալիստի կողմից»<sup>1)</sup> և թե ինչպես կարելի չե վոչնչացնել այդ շահագործումը:

Իհարկե Ենգելսը համեստությունից զրդված լուում ե այն անդհանհատելի դերի մասին, վոր խաղացել ե նա ինքն այս

1) Մարքս և Ենգելս, XV հ., եջ 418, 419, 421:

գործում, արդի գիտական մտքի հեղաշրջման գործում, գիտութ-  
յուններից իրենալիզմն ու տերատերականությունը վտարելու գործում,  
խակական գիտություն, հասարակության ու բնության պատ-  
մության գիտություն ստեղծելու գործում: Սակայն հեղափոխա-  
կան պրոլետարիատը գիտե նրա անմահ ծառայությունները,  
բանվորական շարժման հանդեպ իբրև գիտական կոմունիզմի  
հիմնադիրներինց ձեկի, գիտե նրան իբրև իր ուսուցիչի, և հան-  
ձարեղ Ստալինի ղեկավարությամբ շարունակում և կատարել  
Ենգելսի պատգամները:

### III

Ենգելսի մահվանից անմիջապես հետո արդի ուղիներով  
հայր Եղևարդ Բեռնշտայնը հանդես յեկավ մի թեզիսով, թե  
իբր կապիտալիստական հասարակության զարգացման պատ-  
մական ընթացքը շուտ ավից մարքսիզմի հիմնական սկզբունք-  
ները: «Կոմունիստական Մանիֆեստը» սխալ և բնորոշել արդի  
հասարակական զարգացման տենդենցը: «Հասարակական հարա-  
բերությունների սրումը կատարվեց վոչ այնպես ինչպես նկա-  
րագրում և Մանիֆեստը», այսինքն՝ իբրև թե բուրժուական  
հասարակության դասակարգերի միջև հակամարտությունը չը-  
հանգեց և չի կարող հանգել աշխատավոր ժողովրդի ստեղծումն  
ուժեղանալուն, գրեց նա: Հետևաբար անմտություն և մտածել  
անգամ պրոլետարիատի քաղաքական պայքար կազմակերպելու  
մասին՝ բուրժուազիայի բունի տապալման համար: Ուրիշ յեղրա-  
կացություն չեր կարելի անել Բեռնշտայնի ասածներից: Յեխելով  
վերև նշված թեզիսից, նա նույնիսկ ջանաց ապացուցել, վոր  
մարքսիզմը գիտական չէ, վկայակոչելով այն բանը, վոր գի-  
տության հիմք հանդիսացող փորձը վորպես թե հերքում և  
մարքսիզմի սկզբունքները: Իհարկե, այժմ, յերբ անցել և ավե-  
լի քան մի քառորդ դար, վորի ընթացքում մարքսիստական  
թեորիական միտքն անհամեմատ ավելի առաջ և գնացել, յերբ  
դասակարգային պայքարի պրակտիկական ամեն որ հերքում  
և բեռնշտայնականությունը, վերջապես, յերբ աշխարհի  
մի վեցերորդ մասում պրոլետարիատը բունի կերպով նվաճելով

իշխանությունը կառուցում և նոր սոցիալիստական հասարա-  
կություն, արդեն այնքան ել գեվար չե ապացուցել բերնշտայ-  
նականության անհեթեթությունը: Բայց այժմ մեզ համար  
բնավ այս չե կարևորը, այլ ցույց տալ այն ըստ էության  
բուրժուական թշնամական վերաբերմունքի ահունքները, վորը  
(թշնամանքը) ցուցաբերում են Վ ինտերնացիոնալի թեորետիկ-  
ները Մարքսի ու Ենգելսի ավանդների հանդեպ: Յեվ հիրավի,  
ովքեր էյին, յեթե վոչ բուրժուական մտածողները, վորոնք  
սկզբից և չեթ փորձեցին հերքել մարքսիզմի հիմնական սկզբ-  
բունքները, ջանացին ապացուցել, վոր մարքսիզմը գիտական  
հող չունի և այլն: Միթե փաստ չէ, վոր Բեռնշտայնից շատ  
ավելի առաջ Պոլ Լերուս—Բոյեն Ֆրանսիայում, Գոշենն Անգ-  
լիայում, Շուլցե—Գեյլերնիցը Գերմանիայում, ամեն կերպ փոր-  
ձում էյին հիմնավորել այն թեզիսը, թե իբր «այն լայն տա-  
րածված պատկերացումը, վորի համաձայն սեփականությունը  
կենտրոնանում և ավելի ու ավելի քիչ թվով ձեռքերի մեջ»,  
սխալ դուրս յեկավ: Անկասկած փաստ և, այդ պատճառով ել  
հազար անգամ իրավացի յեր Պլեխանովը, յերբ նա ժամանա-  
կին առարկելով Կառուցիուն, գրեց.—«Յեթե արդեն իսկապես  
այստեղ հարկ կա խոսելու մեր ազնվության պարտքի մասին,  
այստեղ հարկ կա խոսելու մեր շնորհակալությունն ուղղենք  
ապա արդարացի լինենք և մեր շնորհակալությունն ուղղենք  
պատշաճ հասցեյով»<sup>1)</sup> այսինքն բուրժուական մտածողների, և  
վոչ թե Բեռնշտայնի հասցեյին:

Բեռնշտայնը Ենգելսի թարմ գերեզմանի վրա յերգեց բուր-  
ժուազիայի հին յերգը, թե մարքսիզմը գիտություն չէ: Ին-  
չնև իբրև թե այն պատճառով, վոր «սոցիալիզմը ուսմունք և  
ապագա հասարակարգի մասին», վոր զրկում և մեզ «գիտակա-  
նորեն հաստատելու» «նրա առավել բնորոշ հատկանիշները» և  
փորձով իսկույն և եթ ահնառու ցույց տալ այս ամենը, վին-  
գելքանդն ու Ռիկկերտը ժամանակին այն միտքն էյին տարա-  
ծում, թե սոցիալական չերեույթները վերաբերյալ բոլոր ուս-  
մունքները գիտություն չեն, վորովհետև վորպես թե դրանք  
փորձի վրա չեն հենվում, քանի վոր այն, ինչ տեղի չե ունենում

1) Պլեխանով, յերկեր, XI հ., էջ 26:

հասարակական կյանքում չի կրկնվում, ինչպես ասենք Երջիմեդի որենքը: Իսկ առանց վերջինի որենքներն ու որինաչափությունները հաստատել անհնար բան է, վորն եական ու հիմնական է գիտություն համար:

Բացասելով մարքսիզմի գիտականությունն այն հիման վրա, վոր իբր թե նա չի հենվում փորձի վրա, Բեռնշտայնը միայն կրկնեց Վինդեխրանդի, և ուրիշ նեոկանտականների անհեթեթ ուսմունքը գիտություն վերաբերյալ: Փորձը միայն այն չէ, ինչ կատարում է բուրժուական բնագիտան իր կարիներում, ամենամեծ ու ամենահարուստ փորձը, դա պրոլետարիատի դասակարգային պայքարի փորձն է, վորը հանդիսանում է մարքսիզմի հիմնական ու յերակետը: Մարքսն ու Ենգելսն ապացուցում են, վոր հենց հասարակական կյանքումն են կատարվում ամենավիթխարի փորձերը, հարկավոր է միայն կարողանալ ճանաչել դրանք և դրանցից համապատասխան ճիշտ թեորիական ընդհանրացումներ անել: Մի՞թե փաստ չէ, որինակ, վոր կապիտալի անընդհատ վերարտադրությունը վորոշակի իմաստով հանդիսանում է բուրժուական եկոնոմիկայի փորձերի յուրահատուկ կրկնությունը: Առանց կապիտալիստական հարաբերությունների «հավիտենական» վերարտադրություն—անմտություն է բուրժուական հասարակություն գոյությունը, այդ պատճառով էլ Լենինն ասում է, վոր կրկնելիությունը համագիտական չափանիշ է, և Մարքսի ու Ենգելսի ծառայությունը նաև այն է, վոր նրանք ապացուցեցին կրկնելիություն կիրառելիությունը նաև հասարակական յերեւոյթներն ուսումնասիրելիս<sup>1)</sup> Հետևաբար, մարքսիզմը վոչ միայն գիտական աշխարհայացք է, այլև միայն նրա շնորհիվ էր, վոր սոցիոլոգիան դարձավ գիտություն, վորչափով վոր միայն նա յեր, վոր հնարավորություն ստեղծեց սոցիալական կյանքում գիտականորեն կանխատեսումներ անելու:

Բեռնշտայնը, վոր վերջնականապես անցավ բուրժուազիայի բանակը, չի կարող այս բանը հասկանալ, վորովհետև մարքսիզմի գիտականությունը ընդունումը հակադրվում է շահագործող դասակարգերի շահերին: Յեթե մարքսիզմը գիտու-

թյուն է, այն ժամանակ չի կարելի բացասել հասարակական դարգացման նրա դիաբոզների ճշտությունը, կապիտալիստական հասարակության շարժման նրա նշած տեղեկեցները, վերջապես այդ հասարակություն վերափոխություն համար նրա հանձնարարած միջոցները:

Կաուցկին, վոր հանդիսանում է Ս Ինտերնացիոնալի թեորիական տերտերը, հենց այսպես է մոտենում հարցին: Յես շատ բանում մեղք եմ գործել Բեռնշտայնի հետ բանավիճելիս և այժմ յերբ հնարավորություն ունեմ հանդիստ քննելու անցած ուղին չեմ կարող չընդունել, վոր շատ բանում իրավացի յեր Բեռնշտայնը, և վոչ թե իր հակառակորդները. գրում է արդեն ավելի քան բացահայտ ունեգատ Կաուցկին:

Բեռնշտայնը մարքսիզմի հիմնական թեորությունը տեսում էր նրա հետևողական մատերիալիզմի մեջ: Մաքս Ադլերը ջանում էր ապացուցել, վոր իսկապես ասած Մարքսն արդեն այնքան էլ հետևողական մատերիալիստ չէր, ինչպես պատկերացնում են այդ նրա ուսմունքի մի քանի մեկնաբանողներ: «Մարքսի լեզվով մատերիալիստականը վոչինչ այլ բան չի նշանակում, քան եմպիրիկականը և այս պատճառով Մարքսի համար բնորոշ է, վոր այս յերկու արտահայտությունն էլ նա յերբեմն գործածում է միանգամայն իբրև հոմանիշներ, առանձնապես որինակ իր պոլեմիկական յերկում՝ ուղղված Մաքս Շտիրների դեմ: Անցում սպիրիտուալիստական նրբություններից դեպի սոցիալական կյանքի եմպիրիկ յերեւոյթները—արեւումն է կայանում մատերիալիզմը, պատճառով մատերիալիստական ըմբռնումը»: Ուստի «մենք միանգամայն անհրաժեշտ ենք համարում ամենից առաջ վերացնել պատմության մատերիալիստական հայացքի այն սխալ մեկնաբանումը, վոր անկարելի յե դարձնում նրա իսկական իմաստի ըմբռնումը: Մենք նկատի ունենք «փիլիսոփայական—մատերիալիստական մեկնաբանությունը»<sup>1)</sup> Փիլիսոփայական մատերիալիզմը նեոկանտական պողիտիվիզմի թշնամին է, իսկ Մաքս Ադլերը՝ այս վերջին ուսմունքի քարոզիչը: Փիլիսոփայական մատերիալիզմը վոչ միայն անցյալի իմացու-

1) Լենին, I., ուս. էջ 61:

1) Մ. Ադլեր, Մարքսն իբրև մոսկո, 1924 թ. էջ 69, 70: Ընդգծումը հեղինակինն է:

թյունն է, ալլև նրա փորձի հիման վրա հայտարարում է ներկայի որինաչափությունը, չերեւելթնեբի զարգացման տենդենցները, այսպիսով նախագուշակելով նաև ապագան: Այնպես վոր հետևողական փիլիսոփայական մատերիալիզմը ակտիվ է, նա աշխարհի փոփոխության գործիքն է: Նեոկանտականների «մատերիալիզմը» պատահիվ է, նա լավագուշն դեպքում զբաղվում է սոսկ այն բանի նկարագրութեամբ, ինչ յեղի է, և վոչ թե միաժամանակ ճանաչելով տեղի ունեցողը կատարում է ապագայի կանխատեսում: Նեոկանտական «մատերիալիստ» կառուցիկն գրում է, վոր «ամեն մի իմացություն առհասարակ, և վոչ միայն պատմության իմացությունը սեփական իմաստով, հանդիսանում է անցյալի իմացություն»: <sup>1)</sup> Անցյալը նյութ է տալիս իմացության համար, բայց նա չի քարանուծ նրա վրա: Յեթե մարքսիզմը բավարարվեր միայն անցյալի իմացութեամբ, չդներ նաև ապագայի խնդիրները, բուրժուական սովորական ուսմունքներից առաջ չեր անցնի, հետևաբար չեր լինի հետևողական մատերիալիզմ: Մարքսի ու Ենգելսի հետևողական մատերիալիզմը, ուսումնասիրելով անցյալը, կարողացավ միաժամանակ խորանալ ինչպես ներկայի, այնպես էլ ապագայի գաղտնիքների մեջ: Միայն այսպիսի մատերիալիզմից չեղնելով է, վոր հնարավոր յեղավ, բնորոշել ժամանակակից հասարակությունը, գրել, վոր «կապիտալի մոնոպոլիան վերածվում է արտադրության այն չեղանակի կապանքների, վորը ծաղկման է հասել նրա հետ միասին և նրա շնորհիվ: Արտադրության միջոցների կենտրոնացումը և աշխատանքի հանրայնացումը հասնում են մի մակարդակի, չերը նրանք անհամատեղելի յեն դառնում իրենց կապիտալիստական թաղանթի հետ: Վերջինս պատմվում է, խփում է կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը: Եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յեն չենթարկում»: Այս ձևակերպման մեջ կապիտալիզմի անցյալի ու ներկայի ուսումնասիրության հիման վրա նշված է նրա հետագա զարգացման տենդենցը, նրա ապագան: Նեոկանտական պողիտիվիզմը չի կարող բարձրանալ տափակ

<sup>1)</sup> Կ. Կառուցիկ, Պատմության մատերիալիստական բմբոնումը, II հ. ուսու, հրատ., էջ 635:

նկարագրությունից վեր, ուստի կառուցիկն գրում է, վոր մենք չենք կարող համաձայնվել Մարքսի այս դրույթի հետ, «մենք սպասում ենք կապիտալիզմի վախճանին վոչ թե իբրև հետևանք կոնֆլիկտի մի կողմից արտադրողական ուժերի միջև, վորոնց զարգացման համար արտադրության կապիտալիստական չեղանակը չափազանց նեղ է դառնում, մյուս կողմից՝ կապիտալիստական սեփականության միջև. մենք այսպիսի վախճանի սպասում ենք վոչ այն ժամանակ միայն, չերը «կապիտալի մոնոպոլիան կապանք կդառնա» արտադրության տվյալ չեղանակի համար: Մենք բոլոր հիմքերն ունենք վստահորեն հուսալու, վոր այսպիսի վախճանն ավելի շուտ կսկսվի», <sup>1)</sup> հավանաբար շնորհիվ II Ինտերնացիոնալի «կուլտուրական» դեմոկրատական գործունեյության:

Այսպիսով մատերիալիզմի հետևողական կիրառումից նահանջելը հանգում է հասարակական պրոցեսների կեղծ բմբոնման, հետևաբար նաև՝ հասարակական գիտությունների աղճատման: Հենց այս հանգամանքը նկատի ուներ Լենինը, չերը գբբում էր, թե միայն շնորհիվ այն բանի, վոր Մարքսն ու Ենգելսը մատերիալիզմը կիրառեցին հասարակական յերեւելթնեբի նկատմամբ, սոցիոլոգիան դարձավ գիտություն և հնարավոր դարձավ տափակ նկարագրությունից անցնել հասարակական յերեւելթնեբի խիստ գիտական վերլուծություններին: Այնպես վոր, այն, ինչ II Ինտերնացիոնալի ներկայացուցիչները համարում էլին և շարունակում են համարել Մարքսի ու Ենգելսի ուսմունքի բացասական կողմը, իրականում հանդիսանում է մարքսիզմի փիլիսոփայության առավելությունը, դիալեկտիկական մատերիալիզմը կերտողների անձան ծառայությունը: Յեւ հիրավի միթե «մատերիալիզմը» չե, վոր «տվեց միանգամայն որչեկտիվ կրիտերիում» հասարակության գիտական իմացության համար, միթե նա չե, վոր պատմությունից վտարեց սուր չեկտիվիզմը, սպերիտուալիզմը և հասարակական զարգացման հարցերի առհասարակ ամեն մի կրոնական մեկնաբանություն, միթե այն չե, վոր հեղաշրջում առաջացրեց ինչպես բնական,

<sup>1)</sup> Կ. Կառուցիկ, Պատմության մատերիալիստական բմբոնումը, II հ. ուսու, հրատ., էջ 620—621:

այնպես ել հասարակական գիտութիւնները մեջ: II Ինտերնացիոնալի բանակի թեորեալիներն ուրիշ կարծիք ունեն այս մասին: Նրանք համոզված են և ամեն կերպ ջանում են ապացուցել, վոր իբր թե մարքսիզմն ըստ էութեան ամբողջական ու ավարտուն աշխարհայացք չէ, ուստի նա կարիք ունի լրացման կամ «պարբերական ուղղութիւն», ինչպես ասում է Կառուցիկին: Յերբ մարքսիզմի նուշնիսկ բուրժուական քննադատները, ինչպես Վ. Զոմբարտը, չէլին կարող չընդունել, վոր «մարքսիզմի մեծագույն նշանակութիւնն այն է, վոր ինքը հանդիսանալով միանգամայն ավարտուն, ամբողջական տրամաբանական կառուցվածք, սոցիալական գիտութեան զարգացման վրա հակայական ազդեցութիւն (ե գործել և) է գործում հենց այս տեսակետից»<sup>1)</sup> Կառուցիկին ջանում է իր ընթերցողներին հակառակը համոզեցնել: «Այն գիտելիքները, վորոնց համար մենք պարտական ենք Մարքսին ու Ենգելսին, բացարձակ և համարեանական ճշմարտութիւններ չեն», նրանց առավելութիւնը միայն այն է, վոր «նրանք ավելի կատարյալ ճշմարտութիւններ ելին միջնակ մտնի՝ գերիշտող նւարսուքումներէ համեմատութեամբ»<sup>2)</sup> (ընդգծումն իմն է: Հ.): Մարքսից ու Ենգելսից հետո պատմութիւնը նոր փաստեր և հայտնագործել, հանդես են լեկել նոր յերեուկներ, ուստի մարքսիզմն արդեն կարիք ունի վոչ միայն ուղղումներ, այլև լրացումներ, գատում է Կառուցիկին: Նա չի կարողանում ըմբռնել այն պարզ հանգամանքը, վոր լեթե «Կապիտալում» չի խոսվում ասենք իմպերիալիզմի մասին. բայց դրա փոխարեն այնտեղ կան արտագրութեան կապիտալիստական յեղանակի հիմնական որոնքների անալիզը վորը հընարավոր է դարձնում ըմբռնելու նաև իմպերիալիզմի էությունը: Ուստի մարքսիզմի վորև սկզբունքի զարգացում, դըրանց հավելում կամ վերացում չէ, դրանց ուղղութիւն չէ, ինչպես կարծում է Կառուցիկին, այլ գոյութիւն ունեցող սկզբունքների կիրառում սոցիալական և բնական կյանքի նոր յերեուկներին նկատմամբ, նրանց խորացում, հարստացում ու դրանով իսկ արդեն առաջխաղացում պրոլետարիատի դասակարգային

1) Վ. Զոմբարտ, Յր. Ենգելս, 1906 թ. և. Եջ 28, Տուրան Բարտնովսկի, Ակնարկներ քաղաքատնտեսութեան նորագույն պատմութիւնից, 1905 թ, ռուս, Եջ 216:

2) Կառուցիկ, Պատմութեան մատերիալիստական ըմբռնումը, II հ., 629:

պայքարի նոր փորձի, գիտութեան ու տեխնիկայի հիման վրա: Մարքսիզմի առանձնահատկութիւնը, նրա առավելութիւնը նրանից առաջ և հետո գոյութիւն ունեցող փիլիսոփայական սիստեմներից այն է, վոր նա սիստեմ չէ այս բառի հին իմաստով, առանձին հավաքված նախապատմական պնդումների մետաֆիզիկ ամբողջութիւն չէ, այլ գործողութեամբ գործի: Այս գործիքը կոսիված է նորագույն պողպատից, արդէ հասարակութեան ամենահեղափոխական դասակարգի դասակարգային պայքարի արդուէնք է և իր մեջ պարունակում է մարդկային կուլտուրայի հաղարամյա փորձը: Յեթե մինչև այժմ գոյութիւն ունեցող փիլիսոփայական սիստեմները գիտութեաններէն վկայակոչելիս նկատի ունեցին սրանց միայն եմպիրիկ սվյալը, հենվում էլին բացառապես ԴԻԱ վրա, մոռանալով սենդեցը, չըկարողանալով ճանաչել այդ սենդեցը և նրանից այդ ունյն գիտութեան դեմքը փոխող գործիք պարարատել, մարքսիզմն ընդհակառակը, բացի նրանից, վոր յեկնում է գիտութեան ու տեխնիկայի ավելի բարձր զարգացումից, իր ընդհանրացումները համար ոգտագործելով անհամեմատ ավելի շատ հարուստ փորձ, միաժամանակ կարողացավ թափանցել ամեն մի գիտութեան խորքը, ցույց տալ դրանց զարգացման սենդեցը և դրանց: սվյալներն ոգտագործել բացառապես այս տեսանկյունից: Որինակ, յերբ Ենգելսը գրում էր «բնութեան դիալեկտիկան» կամ լենինն իր՝ դարագլուխ կազմող «Մատերիալիզմն ու եմպիրիոկըրիտիցիզմը», գիտութեանների միջ գերակշռող եմպիրիկ սվյալը դեմ էր դիալեկտիկային, բայց նրանք կարողացան խորը թափանցել, այդ վարագույրի հետևում բացել նրանց զարգացման իսկական սենդեցը, դիալեկտիկան, վոր ներհատուկ է դրանց: Ուստի մարքսիզմը գիտական ավարտուն թեորիա չէ, և ինչպես ասում է նուշնիսկ մարքսիզմի հակառակորդ Տուրան Բարտնովսկին, խոսք կարող է լինի նրա առանձին դրուկներն ընդունելու կամ բացասելու և կամ ամբողջութեամբ հերքելու և վոչ թե այն լրացնելու մասին:

Չի կարելի ասել, թե Յերկրորդ Ինտերնացիոնալի թեորեալները ժխտ են լեղել այս տեսակետից: Հենց սկզբից էլ Բեռնշտայնը հանդես է լեկել իբրև Մարքսի ու Ենգելսի կա-

տաղի հակառակորդ: Պլեխանովը, մարքսիզմին անհամեմատ ա-  
վելի մոտիկ կանգնած այս մտածողը, շանացել և քողարկել ֆո-  
յերբախի հայեցողական մատերիալիզմի և Մարքսի ու Ենգելսի  
դիալեկտիկա-մատերիալիստական ուսմունքի տարբերութունը,  
առանձին դեպքերում պաշտպան կանգնել նեոկանտականու-  
թյանը և այլն: Կառուցելին մերժեց մատերիալիստական դիա-  
լեկտիկան և իր վերոհիշյալ յերկհատորյակում արդեն բացա-  
հայտորեն հանդես յեկավ իբրև Հեգելի իդեալիստական դիա-  
լեկտիկայի քարոզիչ: Այնպես վոր II Ինտերնացիոնալի վերջ-  
նական հեռացումը մարքսիզմից պատրաստվել և աստիճանա-  
բար, այն սկսվել և պրոլետարիատին ուսմունքի առանձին  
գրույթների քննադատութունից և վերջացել նրանով, վոր  
սոցիալ-դեմոկրատիայի պաշտոնական թեորետիկները մարք-  
սիզմի վրա այժմս արդեն նայում են վոչ թե իբրև դիտու-  
թյան, վորը զինում և պրոլետարիատին և առհասարակ աշխա-  
տավոր ժողովրդին յերջանիկ կյանքի իրականացման համար,  
այլ իբրև այնպիսի ուսմունքի, վոր խանդարում և նրանց հա-  
վատարմորեն ծառայելու իրենց կապիտալիստ տերերին: Այս  
գրույթը առանձնապես ապացուցվելու կարիք չունի, վորով-  
հետև II Ինտերնացիոնալի պաշտոնական առաջնորդների պրակ-  
տիկ գործունեությունը այդ բանի ամենացայտուն ու ան-  
հերքելի ապացույցն և: Ուստի ծիծաղելի կլիներ, յեթե մենք  
ուզեյինք նրանցից պահանջել մարքսիզմի պաշտպանութուն և  
կամ այն դերի մոտավոր որյեկտիվ գնահատութուն, վոր  
մարքսիզմը խաղացել և և շարունակում և խաղալ բանվորա-  
կան շարժման և գիտական մտքի զարգացման պատմության  
մեջ: Այդ գործը կատարեցին միայն Լենինն ու Ստալինը:  
Նրանք առաջիններն էյին, վոր կարողացան վոչ միայն ճիշտ  
ըմբռնել մարքսիզմի էյությունը, ճիշտ գնահատութուն տալ  
դրան, այլև այս բոլորից համապատասխան պրակտիկ յեղրա-  
կացություններ անել պրոլետարիատի հերոսական պայքարի  
համար: Այդ պատճառով ևլ ժամանակակից պրոլետարիատը չի  
կարող չպարծենալ, վոր Մարքսից ու Ենգելսից հետո նա ունի  
այնպիսի ուսուցիչներ և գիտական կոմունիզմի հիմնադիրների  
գործի այնպիսի շարունակողն էր, ինչպես են Լենինն ու Ստալինը:

Հեղինակի ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ  
ԳՐՔԵՐՈՎ.

- 1) Նացիոնալիզմի տեսության և պրակտիկայի քննադա-  
տության շուրջը. 1930 թ. Պետերատ.
- 2) Հասարակական զարգացման որինաչափությունը. 1932  
թ. Կուսերատ.
- 3) Հայկական մենշևիզմի ժամանակակից փիլիսոփայու-  
թյունը 1934 թ. Կուսերատ.
- 4) Հեգելի զարգացման թեորիան և Մարքսիզմ-Լենինիզմ.  
1935 թ. Պետերատ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0146335

ԳԻՆԸ 1 Ո. 50 ԿՈՊ.



Գ. Գաբրիելյան

Процесс самопознания рабочего класса и становления  
марксизма как науки

Լիզ ՍՍՐ Արմենիա Զրիվան, 1986